Տղաների նախապատվության և աղջիկների թերարժևորման կանխարգելմանն ուղղված գլոբալ ծրագիր

Global Program on Prevention of Son Preference and the Undervaluing of Girls

Սեռի հատկանիշով երեխայի խտրական ընտրության կանխարգելման նպատակով վաղ մանկության շրջանում երեխայի խնամքի և զարգացման ծառայությունների ընդլայնման պետական քաղաքականության բարեփոխումների ծախսերի և իրատեսականության

Վերլուծություն

© Մարդկային զարգացման միջազգային կենտրոն, 2018

Վերլուծությունն իրականացվել է Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի կողմից՝ Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ և ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի կողմից իրականացվող «Տղաների նախապատվության և աղջիկների թերարժևորման կանխարգելմանն ուղղված գլոբալ ծրագրի» շրջանակներում:

Սույն փաստաթղթի բովանդակությունը որևէ կերպ չի արտացոլում Եվրոպական միության և/կամ ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի տեսակետները:

Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից

This project is funded by the EUROPEAN UNION

Բովանդակություն

Ներածություն 4
Հետազոտության մեթոդաբանությունը 6
Հետազոտության հիմնական արդյունքները 10
Եզրակացություններ 27
Առաջարկություններ 31
Հավելված 1. ՀՀ ԱՍՀՆ մի շարք ՊՈԱԿ-ների փոփոխուն և հաստատուն ծախսերի ընդհանուր նկարագրություն 32
Հավելված 2. Երևանի «Մանկան տուն» պետական ոչ ևատրային կազմակերպություն 34

Սեռի հատկանիշով երեխայի խտրական ընտրության կանխարգելման նպատակով վաղ մանկության շրջանում երեխայի խնամքի և զարգացման ծառայությունների ընդլայնման պետական քաղաքականության բարեփոխումների ծախսերի և իրատեսականության վերլուծությունը մշակել է Մարդկային զարգացման միջազգային կենտրոն (ՄԶՄԿ) հասարակական կազմակերպությունը՝ Միավորված ազգերի բնակչության հիմնադրամի (ՄԱԲՀ) հայաստանյան գրասենյակի աջակցությամբ՝ Եվրոպական Միության ֆինանսավորմամբ 2017թ. մարտին մեկնարկած «Տղա երեխայի նախապատվության և աղջիկ երեխայի թերարժևորման կանխարգելմանն ուղղված գլոբալ ծրագրի» շրջանակներում:

Վերլուծությունն իրականացրել է Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի փորձագիտական խումբը.

Փորձագիտական խմբի ղեկավար, ծրագրի գլխավոր տեխնիկական խորհրդատու՝
Վահան Ասատրյան (ՄԶՄԿ)

Փորձագիտական խումբ.

Հայկ Մակարյան, երեխայի խնամքի ոլորտում սեռի խտրական ընտրության կանխարգելմանն ուղղված քաղաքականության փորձագետ

Քրիստինա Սարգսյան, քաղաքականության հետազոտությունների մեթոդաբանության ավագ մասնագետ

Աշոտ Խուրշուդյան, կարողությունների զարգացման ավագ մասնագետ

Մանե Թորոսյան, կրտսեր հետազոտող

«Սեռի հատկանիշով երեխայի խտրական ընտրության կանխարգելման նպատակով վաղ մանկության շրջանում երեխայի խնամքի և զարգացման ծառայությունների ընդլայնման պետական քաղաքականության բարեփոխումների ծախսերի և իրատեսականության վերլուծություն»

Ներածություն

1. Սույն հետազոտության նպատակը ՀՀ կառավարությանը և քաղաքացիական հասարակությանը, համայնքներին և տեղական ինքնակառավարման մարմիններին, մասնավոր ձեռնարկություններին և այլ առանցքային շահառուներին փաստերի վրա հիմնված քաղաքականության մշակման գործընթացում խորհրդատվության տրամադրումն է՝ «Պտղի սեռի խտրական ընտրության դեմ պայքար» ծրագրի շրջանակներում:[1]

2. Հետազոտությունը և դրա արդյունքները հարկ է քննարկել Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի (ՄԶՄԿ) կողմից 2015-2017 թվականներին սեռի հատկանիշով երեխայի խտրական ընտրության կանխարգելման նպատակով վաղ մանկության շրջանում երեխայի խնամքի և զարգացման ծառայությունների ընդլայնման պետական քաղաքականության բարեփոխումների վերաբերյալ իրականացրած մի շարք հիմնարար վերլուծությունների և հրապարակումների համատեքստում:

3. Այսպես, 2017 թվականին ՄԶՄԿ կողմից հրապարակված «Սեռի հատկանիշով երեխայի խտրական ընտրության կանխարգելման նպատակով վաղ մանկության շրջանում երեխայի խնամքի և զարգացման ծառայությունների ընդլայնման պետական քաղաքականության վերլուծություն» զեկույցը[2] և դրանում տեղ գտած տվյալները, տեղեկությունները, փաստերը, եզրակացություններն ու առաջարկները դարձել են երեխայի սեռի խտրական ընտրության դեմ պայքարում կարևորագույն խնդիրներից մեկի՝ աշխատուժում կանանց մասնակցության բարձրացմանը և ընտանեկան կյանքն ու աշխատանքը համադրելուն ուղղված՝ երեխայի վաղ մանկության շրջանի խնամքի ու զարգացման ծառայությունների համակարգի զարգացման պետական քաղաքականության մշակման և իրականացման, ծառայությունների մոդելների ներդրման, հետագա անելիքների ուրվագծման ամուր և հուսալի հիմքը:

4. 2017 թվականին ՄԶՄԿ իրականացրած երկու հետազոտություններ՝ Հայաստանի Հանրապետությունում երեխայի սեռի խտրական ընտրության և սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատման կանխարգելմանն ուղղված պետական քաղաքականության և ծրագրերի մշտադիտարկման երկու զեկույցները՝ պետական մարմիններում քաղաքականության մշակման պատասխանատուների, քաղաքացիական հասարակության, գիտակրթական համայնքի և մասնավոր հատվածի շահագրգիռ կողմերի, տեղական համայնքերի, Փոխցանցի անդամների և միջազգային զարգացման գործընկերների ուշադրությանն է ներկայացնում Հայաստանում պտղի սեռի խտրական ընտրության և սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատման կանխարգելմանն ուղղված պետական քաղաքականության և ծրագրերի, այդ թվում՝ երեխայի սեռի խտրական ընտրության կանխարգելման պետական քաղաքականության կարևորագույն ուղղության՝ աշխատուժում կանանց մասնակցության բարձրացմանը և ընտանեկան կյանքն ու աշխատանքը համադրելուն ուղղված՝ երեխայի վաղ մանկության շրջանի խնամքի ու զարգացման ծառայությունների համակարգի զարգացման պետական քաղաքականության խնդիրների մշտադիտարկման արդյունքները:[3]

5. Երեխայի սեռի խտրական ընտրության և սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատման խնդիրների վերաբերյալ մեկ այլ նշանակալի հետազոտական աղբյուր է ՄԶՄԿ հրապարակած «Սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների տարածվածությունն ու պատճառները Հայաստանում» 2017թ. զեկույցը, որն ամփոփում է խնդրի վերաբերյալ քանակական և որակական մեթոդների կիրառմամբ կարևորագույն հետազոտության արդյունքերը, որոնք ուղղված են պարզելու Հայաստանում պտղի սեռով պայմանավորված հղիության ընդհատումների տարածվածությունը, ինչպես նաև դրա հիմնական պատճառները, այդ թվում՝ հիմնախնդրի հասարակական ընկալումները: Հետազոտությունը վեր է հանում սեռերի

[1] Annex 3 – Methodological Outline for Costing and Feasibility Analysis of Policies and Programmes on Preventing Non-Medical Gender-Biased Sex Selection in Armenia Conducted by the Policy Analysis and Policy Advice Group (PAPAG),Gender-Biased Sex Selection Prevention Policy Experts (GIUSSEPPE)

[2] https://ichd.org/download.php?f=889&fc=Child%20Care%20(Arm).pdf.

[3] https://ichd.org/download.php?f=886&fc=Monitoring%20Report%202%20(Arm).pdf, https://ichd.org/download.php?f=871&fc=Monitoring%20Report%20(Arm%20-%20web%20version).pdf:

անհամամասնության պատճառները՝ ուսումնասիրելով տղա կամ աղջիկ երեխայի գերապատվության պատճառների շրջանակը, հղիությունների պատմություններն ու դրանց արդյունքները, երեխայի սեռը որոշելու համար նախածննդյան փուլում անցկացվող ստուգումները և դրանց արդյունքները: Հետազոտությունը, մասնավորապես, քանակական և որակական տվյալներ է ապահովում երեխայի սեռի խտրական ընտրության կանխարգելման քաղաքականության մշակման համար, այդ թվում՝ աշխատուժում կանանց մասնակցության բարձրացմանը և ընտանեկան կյանքն ու աշխատանքը համադրելուն ուղղված՝ երեխայի վաղ մանկության շրջանի խնամքի ու զարգացման ծառայությունների համակարգի զարգացմանն ուղղված պետական քաղաքականության մշակման համար:[4]

6. Ավելի վաղ՝ 2016 թվականին ՄԶՄԿ հրապարակած երկու՝ «Առողջապահության ոլորտում սեռի հատկանիշով պտղի խտրական ընտրության կանխարգելման քաղաքականության և գործող պրակտիկայի վերլուծություն»[5] և «Սոցիալական ոլորտում սեռի հատկանիշով պտղի խտրական ընտրության կանխարգելման քաղաքականության և պրակտիկաների վերլուծություն»[6] զեկույցներում ներկայացված է սեռի հատկանիշով պտղի խտրական ընտրության կանխարգելման վրա առողջապահության և սոցիալական ապահովության ոլորտներում Հայաստանում իրականացվող պետական քաղաքականության ազդեցության գնահատականը, այդ թվում՝ առանց բժշկական ցուցման երեխայի սեռի ընտրության սահմանափակման միջազգային փորձը և մասնագիտական էթիկային վերաբերող հարցերը, առողջապահության և սոցիալական ապահովության ոլորտներում իրավական կարգավորման, պետական քաղաքականության ու ծրագրերի վերլուծությունը, աշխատուժում կանանց մասնակցության և կանանց զբաղվածության ու երեխայի խնամքը համատեղելու հնարավորությունների ընդլայնման միջազգային փորձի ուսումնասիրությունը, իրավիճակի և միտումների ամփոփումը, եզրակացություններ և առաջարկություններ:

7. 2016 թվականի սկզբում ՄԶՄԿ կողմից հրապարակված «Պտղի սեռի խտրական ընտրության կանխարգելման քաղաքականության նոր գործիքներ. երկուսը մեկում» քաղաքականության համառոտագիրը, որը մշակվել է «Պտղի սեռի խտրական ընտրության դեմ պայքար» ծրագրի շրջանակներում 2015թ-ի նոյեմբերի 30-ին կայացած «Պտղի սեռի խտրական ընտրության պատճառների կանխման պետական քաղաքականության նախաձեռնություններ» թեմայով քննարկման մասնակիցների կողմից արտահայտված կարծիքների հիման վրա, անկյունաքարային դեր ունեցավ երեխայի սեռի խտրական ընտրության կանխարգելման հանրային քաղաքականության գերակա ուղղությունների համաձայնեցման և քաղաքականության հաղորդակցության խնդրում:[7]

8. Այսպիսով, սույն հետազոտությունը հիմնվում է նախորդ տարիներին երեխայի սեռի երեխայի խտրական ընտրության երևույթի վերաբերյալ վերը նշված անկյունաքարային հետազոտությունների և քաղաքականության առաջարկների վրա և ուղղված է դրանցից ամենակարևորի՝ վաղ մանկության շրջանում երեխայի խնամքի և զարգացման ծառայությունների ընդլայնման պետական քաղաքականության բարեփոխումների ծախսերի և իրատեսականության վերլուծության իրականացմանը:

9. Սույն հետազոտությունը չի կրկնում վերը նշված քաղաքականության փաստաթղթերում բազմիցս շարադրված դրույթներն ու առաջարկները, որոնք վեր են հանում և վերլուծում են երեխայի սեռի խտրական ընտրության կանխարգելման նպատակով վաղ մանկության շրջանում երեխայի խնամքի և զարգացման ծառայությունների ընդլայնման պետական քաղաքականության փոխկապակցությունը, այլ ուղղված է այդ հետազոտություններում արված առաջարկների իրականացման հնարավորությունների քննարկմանը՝ այդ խնդրում որոշում կայացնողներին աջակցելու նպատակով:

[4] https://ichd.org/download.php?f=879&fc=Survey%20(Arm).pdf:
[5] https://ichd.org/download.php?f=822&fc=2_Health%20sector_Final%20(2).pdf:
[6] https://ichd.org/download.php?f=814&fc=1_Social%20sector_Final.pdf:
[7] https://ichd.org/download.php?f=806&fc=116-GBSS-Arm.pdf:

Հետազոտության մեթոդաբանությունը

10. Սեռի հատկանիշով երեխայի խտրական ընտրության կանխարգելման նպատակով վաղ մանկության շրջանում խնամքի և զարգացման ծառայությունների պետական քաղաքականության ծախսերի և օգուտների վերլուծության, ծրագրի ծախսատարության ու իրագործվելիության գնահատման նպատակով ՄԶՄԿ փորձագիտական խմբի կողմից որպես առաջնային մեթոդ է ընտրվել ծախսեր-օգուտներ վերլուծության մեթոդը, որը հնարավորություն է տալիս պետական ծախսերը համադրել ակնկալվող արդյունքների հետ: Նախքան ծախսերի նկարագրությանն անցնելը հակիրճ ներկայացնենք կիրառվող մեթոդաբանությունն ու առնչվող տնտեսագիտական եզրերը:

11. Ծախսեր-օգուտներ վերլուծությունը (Cost-benefit analysis) սկզբնավորվում է 1844թ., որպես «տնտեսական հաշվառում»:[8] Այն սկզբնապես կիրառվել և ներկայում էլ լայնորեն կիրառվում է թե՛ մասնավոր, թե՛ հանրային հատվածում: Այսպես, մասնավոր ընկերությունների գերխնդիրը սեփականատերերի համար նրանց սեփական և փոխառու միջոցներով առավելագույն շահութաբերության ապահովումն է, իսկ շահութաբերության գնահատման ցուցանիշների և դրանց արդյունավետությունը գնահատելու համար գոյություն ունեն գոյություն հաշվապահական և տնտեսագիտական բազմազան մեթոդներ: Միաժամանակ, թեպետ հանրային հատվածի քաղաքականության ծախսերի դրամական գնահատումը միանգամայն իրագործելի խնդիր է, սակայն քաղաքականության օգուտների գնահատումը, կամ դրանց դրամական համարժեքի գնահատումը հաճախ դժվար իրագործելի, որոշ դեպքերում՝ անհնար խնդիր է: Չնայած ծախսեր-օգուտներ վերլուծության մեթոդը մշակվել է գնահատելու համար ընկերության ներդրումների ֆինանսական արդյունքները, այն մեծ արդյունավետությամբ կարող է կիրառվել թե՛ տնտեսական, թե՛ առանձին սոցիալական արդյունքների վերլուծության և գնահատման համար:

12. Նշված մեթոդաբանության կիրառման շրջանակներում հաշվարկվում է տնտեսական արժեք, այնուհետև հաշվարկվում է ներդրման հատույցը (ROI): Հարկ է նշել, որ դրամական կամ այլ ռեսուրսների արտահոսք արտահայտող ցանկացած նախագիծ, որին առնչվող ծախսերն ու եկամուտները սպասվում են հաջորդող ժամանակաշրջաններում, ընդունված է համարել ներդրում: Ստացված արդյունքը կարելի է ներկայացնել ծախսեր-օգուտներ գործակցի (benefit-cost ratio) միջոցով. եթե օրինակ տվյալ գործակիցը հավասար է 1:4, սա կնշանակի, որ ծրագրում ներդրված յուրաքանչյուր 1 դրամը կհատուցի 0.25 դրամ՝

ծախսեր-օգուտներ գործակից = ընդամենը օգուտներ / ընդամենը ծախսեր

13. Հանրային ծախսերի իրականացման տեսանկյունից ծրագրի շրջանակներում զուտ օգուտը սովորաբար հաշվարկվում է՝

զուտ օգուտներ = ընդամենը օգուտներ – ընդամենը ծախսեր

14. Մասնավոր և հանրային ոլորտներում վերլուծության առանցքային տարբերությունն արտահայտվում է այն հանգամանքում, որ երկրորդ դեպքում անհրաժեշտ է հաշվի առնել ինչպես դրամական, այնպես էլ ոչ դրամական ծախսերն ու օգուտները, որոնք վերաբերում են ողջ հասարակությանը՝ ցանկացած բացասական ազդեցություն գնահատելով որպես ծախս, իսկ դրականները՝ որպես օգուտ և հաշվի առնելով արտքին ազդեցությունները (երրորդ կողմի վրա), ինչպես օրինակ՝ մթնոլորտի և շրջակա միջավայրի աղտոտվածություն, աղմուկ, արդյունաբերական թափոններ և այլն: Քանի որ ՄԶՄԿ փորձագիտական խմբի կողմից «Պտղի սեռի խտրական ընտրության դեմ պայքար» ծրագրի շրջանակներում առաջնային է ընտրվել ծախսեր-օգուտներ վերլուծությունը, ներկայացնենք այն ավելի մանրամասն, հետևյալ քայլերի հաջորդականությամբ՝

- վերլուծության շրջանակների և նպատակի սահմանում,
- շահառուների շրջանակի որոշում,
- ծախսերի և օգուտների որոշում ու դասակարգում,
- ծրագրային ծախսեր և օգուտներ՝ որտեղ կիրառելի է,
- ծախսերի մոնետիզացիա (դրամական համարժեքի վերագրում),

[8] Տե՛ս Ալֆրեդ Մարշալի վաղ աշխատությունները, ինչպես նաև՝ Melese F., Richter A., Solomon B. "Military Cost-Benefit Analysis (CBA): Theory & Practice" (2015):

- օգուտների քանակականացում ըստ արդյունավետության միավորների (ծախսերի արդյունավետություն) կամ մոնետիզացիա (ծախսեր-օգուտներ),
- ծախսերի և օգուտների զեղչում (դիսկոնտավորում)՝ դրանց ներկա արժեքները ստանալու նպատակով,
- ծախսերի արդյունավետության գործակցի կամ զուտ ներկա արժեքի (ԶՆԱ) հաշվարկ,
- ծրագրի զգայունության վերլուծություն,
- եզրակացությունների և առաջարկությունների ներկայացում՝ որտեղ կիրառելի է:[9]

15. Ծախսեր-օգուտներ վերլուծության հիման վրա արդյունքերի գնահատումը կարելի է ներկայացնել *Գծապատկեր 1-ում* բերված տրամաբանական կառուցվածքի միջոցով, որն, ըստ էության, ոչ այնքան քայլերի և դրանց արդյունքների արտացոլման միջոց է, որքան վերլուծական գործիք:

16. Հատկանշական է, որ սոցիալական հանրային քաղաքականության ծախսերն ու օգուտները ժամանակային տեսանկյունից սովորաբար չեն համընկնում, առավել ևս, երբ քննարկվում է երեխայի վաղ մանկության շրջանը: Տնտեսագիտության հիմնարար սկզբունքներից մեկը փողի ժամանակային արժեքն է, ինչը նշանակում է, որ անվանական դրամական արտահայտությամբ միևնույն գումարը չունի միևնույն արժեքը կամայական տարբեր ժամանակաշրջաններում: Ապագային առնչվող դրամական հոսքերի ներկա արժեքի (PV – present value) գնահատումը կոչվում է զեղչում (դիսկոնտավորում)՝

$$PV = \sum_{i=1}^{n} \frac{NCF_i}{(1+r)^i}$$

որտեղ NCF_i – (net cash flow) զուտ դրամական հոսքերն են,

r – զեղչադրույքն է,

n – համապատասխան ժամանակաշրջանների թիվը (օր, շաբաթ, ամիս, տարի):

Գծապատկեր 1. Ծախսեր-օգուտներ վերլուծության հիմնական քայլերը



[9] Newcomer K. E., Hatry H. P., Wholey J. S., Cellini S. R., Kee J. E. "Handbook of Practical Program Evaluation, Fourth" (2015)

17. Դրամական հոսքերի զեղչումը համարվում է առանցքային, քանի որ հաշվի են առնվում հետևյալ գործոնները՝
   - ներդրված գումարի գնողունակության անկումը տնտեսությունում առկա ինֆլյացիայի մակարդակի պատճառով,
   - ռիսկազերծ ներդրումները,
   - կոնկրետ ներդրումային ծրագրի ռիսկերը,
   - ներդրված կապիտալի պահանջվող հատույցը (եկամտաբերությունը):
18. Մասնավորապես, մեկ տարի հետո սպասվող մեկ հազար դրամի ներկա արժեքը, եթե զեղչադրույքն ընդունենք 12%, հավասար կլինի 893 դրամ, 2 տարի հետո միևնույն գումարի ներկա արժեքը կլինի 797 դրամ և այսպես շարունակ: Սոցիալական հանրային քաղաքականության ծրագրերում փողի ժամանակային արժեքը գնահատելու տեսանկյունից կիրառվում է «սոցիալական» զեղչադրույք: Սոցիալական զեղչադրույքի արժեքային մեծությունն ուղիղ համեմատական է այն երկրին բնորոշ ռիսկերին, որտեղ իրականացվում է գնահատման ենթակա սոցիալական ուղղվածության ծրագրի շրջանակներում ծախսերի և ակնկալվող եկամուտների վերլուծություն: Որոշ հետազոտություններ ցույց են տալիս, որ զարգացած երկրների համար սոցիալական զեղչադրույքը գնահատվել է 3-7%, իսկ զարգացող երկրների պարագայում՝ 8-15%:[10]
19. Թեպետ ծախսեր-օգուտներ վերլուծության վերը շարադրված քայլերի հաջորդական կիրառությունը դյուրին հարց կարող է թվալ առաջին հայացքից, իրականում այն պահանջում է ավելի համակողմանի մոտեցում: Որպես առաջին քայլ ներկայացնենք ծրագրային ծախսերի դասակարգման հետևյալ տնտեսագիտական մոտեցումը, ինչպես ցուցադրված է *Գծապատկեր 2-ում՝*
   - հաստատուն ծախսեր (FC – Fixed costs), որոնք անփոփոխ են գործունեության կամ թողարկման տարբեր ծավալների շրջանակներում,
   - փոփոխուն ծախսեր (VC – Variable costs), որոնք փոխվում են գործունեության կամ թողարկման ծավալներին զուգընթաց,
   - կիսափոփոխուն ծախսեր (Semi-variable costs), որոնք պարունակում են երկուսին էլ բնորոշ տարրեր[11]:
20. Ընդհանուր ծախսերը հավասար են հաստատուն և փոփոխուն (ինչպես նաև կիսափոփոխուն, եթե կիրառելի է) ծախսերի հանրագումարին:

Գծապատկեր 2. Փոփոխուն, հաստատուն և կիսափոփոխուն ծախսեր



21. Որպես հաստատուն ծախսերի օրինակ կարելի է նշել վարձակալական ծախսերը, որպես հաստատուն՝ գործառնական բնույթի ծախսերը, որպես կիսափոփոխուն՝ հեռախոսակապի ծառայությունները (աբոնենտային վճարը՝ հաստատուն մաս, րոպեավճարները՝ փոփոխուն): Երեխաների ցերեկային և շուրջօրյա խնամք իրականացնող պետական ոչ առևտրային կազմակերպությունների համար սուբսիդավորման փոխհարաբերությունները կարգավորվում են 2007թ. մայիսի 31-ին կառավարության կողմից ընդունված թիվ 815-Ն որոշման շրջանակներում: Համաձայն այս որոշման՝ վերոհիշյալ կազմակերպությունների համար որպես փոփոխական են դիտարկվում յուրաքանչյուր խնամյալի հաշվով

[10] Harrison M. 2010, Valuing the future: the social discount rate in cost-benefit analysis, Visiting Researcher Paper, Productivity Commission, Canberra.
[11] Paul Kr. S. "Management Accounting", New Central Book Agency (P) Limited (2012)

կենցաղային և հանրային սննդի ձեռքբերմանն ուղղված ծախսերը՝ սննդամթերք և խմիչք, որոնք հաստատուն են միավորի հաշվով, իսկ որպես հաստատուն՝ մյուս այլ ծախսերը, մասնավորապես՝

- աշխատակիցների աշխատավարձեր և հավելավճարներ,
- էներգետիկ ծառայություններ,
- կապի ծառայություններ,
- ապահովագրական ծախսեր,
- գույքի և սարքավորումների վարձակալություն,
- մասնագիտական ծառայություններ,
- շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում, շահագործում և պահպանություն,
- մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և շահագործում և պահպանություն,
- տրանսպորտային ծախսեր,
- այլ ծախսեր:

22. Մանկախնամ և նախադպրոցական կրթություն իրականացնող հաստատությունների՝ վերը շարադրված տրամաբանությամբ ծախսերի վերլուծությունը կներկայացնենք՝ դրանց ֆինանսավորման առանձնահատկություններից ելնելով: Մասնավորապես, կդիտարկենք պետական բյուջեից սուբսիդավորվող պետական ոչ առևտրային կազմակերպությունների ծախսերի կառուցվածքն ու ընդհանուր միտումները, այնուհետև՝ համայնքային ոչ առևտրային կազմակերպությունները: ՄԶՄԿ փորձագիտական խմբի կողմից իրականացվել են այցելություններ, հարցազրույցներ և ուսումնասիրություններ տեղում Երևանի «Մանկան տուն» ՊՈԱԿ-ում՝ որպես բյուջեից ֆինանսավորվող և Երևանի թիվ 92 մանկապարտեզում, որը հանրապետությունում առաջիններից է վաղ մանկության տարիքի զարգացման խնդիրներ ունեցող երեխաներին խնամք տրամադրելու գործում՝ որպես համայնքային բյուջեից ֆինանսավորվող և մասամբ ինքնաֆինանսավորվող կազմակերպություն՝ հաշվի առնելով նախադպրոցական տարիքի երեխաներին մատուցվող կրթական և զարգացման լրացուցիչ ծառայություններից ստացվող միջոցները, որոնք սակայն աննշան մաս են կազմում եկամուտների մեջ:

Հետազոտության հիմնական արդյունքները

23. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կազմում գործող մանկախնամ գործունեություն իրականացնող պետական ոչ առևտրային կազմակերպությունների ծախսերի ընդհանուր նկարագրության շրջանակներում օգտագործվել են ՀՀ կառավարության էլեկտրոնային կայքում հասանելի սուբսիդավորման պայմանագրերում ներկայացված տվյալները: 2010-2015թթ. համար փոփոխուն ծախսերի բաշխվածությունը՝ հիստոգրամը, որն արտացոլում է կրած ծախսերի փաստացի հաճախականությունները որոշակի գումարային միջակայքերում, ցուցադրված է *Գծապատկեր 3-ում*:

Գծապատկեր 3. Փոփոխուն ծախսերի հաճախականություն[12]



24. Փոփոխուն ծախսերի համար մոդալ միջակայք է (դիտարկված տվյալներն ամենամեծ հաճախականությամբ ընկած են տվյալ միջակայքում) 1,300-1,500 ՀՀ դրամ միջակայքը: Միայն մոդալ միջակայքի ներկայացումը, սակայն բավարար չէ ճշգրիտ եզրակացություններ կատարելու համար, և այդ պատճառով դիտարկենք տվյալ ժամանակահատվածը բնութագրող փոփոխուն ծախսերի թվային այլ բնութագրիչներ, մասնավորապես, նկարագրական վիճակագրության ամենահաճախակի կիրառվող ցուցանիշը՝ թվաբանական միջինը: Այսպիսով, նշված շրջանում դիտարկված բոլոր կազմակերպությունների համար փոփոխուն ծախսերի միջին մեծությունը՝ հաստատուն յուրաքանչյուր խնամյալի հաշվով, կազմում է շուրջ 1,365 ՀՀ դրամ: Վեց տարիների ընթացքում փոփոխուն ծախսերի դինամիկան, համակցված մանկախնամ հասատություններում խնամվող երեխաների տարեկան միջին թվաքանակի հետ, ներկայացված է *Գծապատկեր 4-ում*:

25. Ակնհայտ է փոփոխուն ծախսերի տատանողականությունը և բազմաթիվ ծայրահեղ արժեքների (outliers) առկայությունը, իսկ ինչպես հայտնի է թվաբանական միջինը զգայուն է նման ծայրահեղ արժեքների նկատմամբ: Որպես տվյալ ցուցանիշի այլընտրանք կարելի է դիտարկել մեդիանը: Տվյալների բազմության կենտրոնական միտումը նկարագրող թվային բնութագրիչներից վերջինս ամենակայունն է ծայրահեղ արժեքների նկատմամբ[13]: 2010-2015թթ. ժամանակաշրջանում դիտարկված բոլոր կազմակերպությունների մակարդակով, որպես փոփոխուն ծախսերի բնութագրիչ մեծություն, մեդիանի արժեքը կազմում է 1,300 ՀՀ դրամ:

26. Հաստատուն ծախսերն, ըստ սահմանման, անփոփոխ են գործունեության կամ թողարկման տարբեր ծավալների դեպքում, սակայն, հաշվի առնելով դիտարկվող մանկախնամ հաստատությունների առանձնահատկություններն ու մեկ խնամյալի հաշվով իրականացվող ծախսերի վերաբերյալ ընդհանուր պատկերն արտացոլելու անհրաժեշտությունից ելնելով՝ *Գծապատկեր 5-ով* ներկայացնենք նաև փոփոխուն ծախսեր-միավորի հաշվով հաստատուն ծախսեր համադրությունը:

[12]Տվյալները հավաքագրված են ՀՀ կառավարության էլեկտրոնային կայքի՝ ՊՈԱԿ-ների ֆինանսավորմանը նվիրված բաժնից https://www.e-gov.am/poak/

[13] Մեդիանը հաշվարկվում է տվյալները դասակարգելով ըստ աճման կամ նվազման կարգի և, եթե տվյալների քանակը կենտ է, որպես մեդիան է ընտրվում կենտրոնական արժեքը, իսկ եթե զույգ՝ երկու կենտրոնական արժեքների թվաբանական միջինը:

Նկարագրված ժամանակահատվածում ԱՍՀՆ կազմում գործող բոլոր մանկախնամ հաստատությունների համար հաստատուն ծախսերի գծով արձանագրված նվազագույն մեծությունը կազմում է 532.41 հազ. դրամ, առավելագույնը՝ շուրջ 3,085 հազ. դրամ, միջին մեծությունը՝ շուրջ 1,180 հազ. դրամ: Կրկին հարկ է նշել, որ փոփոխական և հաստատուն ծախսերի տնտեսագիտական մեկնաբանությունը միարժեքորեն պահպանված չէ պետական ոչ առևտրային կազմակերպությունների՝ կառավարության կողմից ամենամյա տրամադրվող սուբսիդավորման պայմանագրերում: Այսպես, որպես փոփոխուն են ճանաչվում միայն կենցաղային և հանրային սննդի ձեռքբերմանն ուղղված ծախսերը, իսկ մյուս բոլոր ծախսերը դասակարգվում են որպես հաստատուն, որոնք տնտեսագիտական դասակարգման տեսանկյունից բնավ այդպիսիք չեն, ինչպես օրինակ՝ առանձին կոմունալ ծառայություններ (ֆիքսված սակագին, ինչը ենթադրում է միավորի հաշվով հաստատուն ծախս, հետևաբար, համաձայն մեր կողմից քննարկվող դասակարգման, հանդիսանում է փոփոխական ծախս), կապի և հեռահաղորդակցության ծառայությունները, մասնավորապես՝ հեռախոսակապի ծառայությունը, որը կիսափոփոխուն ծախսերի տիպական օրինակ է (հաստատուն ամսական վճար գումարած սպառված ծառայությունների դիմաց ֆիքսված սակագին) և այսպես շարունակ:

Գծապատկեր 4. Խնամյալների միջին տարեկան թվաքանակ և փոփոխուն ծախսեր



Գծապատկեր 5. Փոփոխուն և հաստատուն ծախսեր միավորի հաշվով



27. Միաժամանակ, ՀՀ ԱՍՀՆ համակարգի մանկախնամ հաստատությունների փոփոխուն և հաստատուն ծախսերի ուսումնասիրության հարցում օգտակար է նաև նկարագրական վիճակագրության առանցքային ցուցանիշների ներկայացումը՝ ամփոփված Հավելվածի *Աղյուսակ 1-ում*:

28. Երեխաների վաղ խնամքի ծառայությունների հնարավոր շահառու մայրերի և երեխաների շրջանակը պարզելու համար կարևոր է նաև կանանց զբաղվածության և եկամուտների/վարձատրության և մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստների վիճակագրական տվյալների ուսումնասիրությունը: 2017թ. ՀՀ-ում աշխատունակ տարիքի բնակչության կազմում կանանց և տղամարդկանց թվաքանակները կազմել են համապատասխանաբար 1,106.9 հազ. և 914.5 հազ. մարդ, մինչդեռ տնտեսապես ակտիվ է 584.6 հազ. կին (52.8%), և 646.2 հազ. տղամարդ (70.6%):[14] 2016-2017թթ. կանանց և տղամարդկանց տնտեսական ակտիվության կարգավիճակի մասին առավել մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է *Աղյուսակ 1-ում*:

Աղյուսակ 1. 15-75 տարեկան բնակչությունն ըստ տնտեսական ակտիվության կարգավիճակի, 2016-2017թթ., (հազար մարդ)

	Բաշխումն՝ ըստ սեռի			
	2016թ.		2017թ.	
	կին	տղամարդ	կին	տղամարդ
Աշխատանքային ռեսուրսներ	1,106.2	905.2	1,106.9	914.5
այդ թվում՝ ք. Երևան	*362.2*[15]	285.*5*		
Տնտեսապես ակտիվ բնակչություն	581.2	645.1	584.6	646.2
այդ թվում՝ ք.Երևան	*177.5*	*205.8*	-	-
այդ թվում՝				
զբաղվածներ	*478.0*	*528.2*	*482.4*	*529.5*
գործազուրկներ	*103.2*	*116.9*	*102.2*	*116.7*
Տնտեսապես ոչ ակտիվ բնակչություն,	525.0	260.1	522.3	268.3
այդ թվում՝ ք. Երևան	*49.0*	*72.1*	-	-

29. Տնտեսապես ոչ ակտիվ 525 հազ. կանանց չաշխատելու հիմնական պատճառներ են ընտանեկան հանգամանքները՝ հղիություն, ծննդաբերություն, երեխայի խնամք, տնային տնտեսությամբ ծանրաբեռնվածություն: Այսպես, տնտեսապես ոչ ակտիվ կանանց ընդհանուր թվի 37.9%-ը (199 հազար) հենց ընտանեկան հանգամանքներն են նշել որպես իրենց չաշխատելու հիմնական պատճառ, իսկ ընդհանուր աշխատանքային ռեսուրսների մեջ այդ ցուցանիշը կազմում է 18%:[16]

30. Կանայք ընդհանուր առմամբ ներգրավված են միջին աշխատավարձից ցածր վարձատրությամբ ոլորտներում: Արդյունաբերության ճյուղային գործունեության լայն խմբում կանայք հիմնականում ընդգրկված են մշակող արդյունաբերության ոլորտում, որտեղ վարձատրության մակարդակը կրկին միջինից ցածր է: *Աղյուսակ 2-ում* բերված են կանանց զբաղվածության և վարձատրության տվյալները:

[14] «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2018թ. հունվար-մարտին», ՀՀ ԱՎԾ, Երևան 2018թ, էջ 98:
[15] «Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2017», ՀՀ ԱՎԾ, Երևան 2017թ, էջ 105-108:
[16] «Հայաստանի կանայք և տղամարդիկ-2017», ՀՀ ԱՎԾ, Երևան 2017թ, էջ 60:

Աղյուսակ 2. Կանանց զբաղվածությունը և վարձատրությունը[17]

Զբաղվածության ոլորտ	Տեսակարար կշիռը ոլորտում, % (մարդ) 2016թ.[18]	Տեսակարար կշիռը կանանց զբաղվածության մեջ, %, 2016թ	Ոլորտում կանանց միջին ամսական անվանական աշխատավարձը, 2016թ.
Արդյունաբերություն	30 (37,000)	7.7	
Հանքագործական արդյունաբերություն և բաց հանքերի շահագործում			227,606
Մշակող արդյունաբերություն			120,846
Էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում			266,694
Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում			162,353
Առևտուր, կացության և հանրային սննդի կազմակերպում	40 (69,000)	14.4	104,022
Տեղեկատվություն և կապ	32 (6,000)	1.3	263,169
Ֆինանսական և ապահովագրական գործունեություն	54 (7,000)	1.5	292,001
Մասնագիտական և գիտական, տեխնիկական	58 (11,000)	2.3	152,732
Վարչարարական և օժանդակ գործունեություն			113,760
Պետական կառավարում	61 (148,000)	31.0	188,204
Կրթություն			113,695
Առողջապահություն և բնակչության սոցիալական սպասարկում			126,288
Մշակույթ, զվարճություններ և հանգիստ	48 (22,000)	4.6	107,129
Սպասարկման այլ ծառայություններ			95,639
Կանանց միջին ամսական անվանական աշխատավարձ ***միջին անվ. աշխատավարձ***	138,901 ***174,445***[19]		

31. Հաշվի առնելով վերը նշված տվյալները՝ նպատակահարմար է դիտարկել երեք խումբ՝ ըստ կանանց եկամտային բաշխվածության.

- մինչև 100,000 դրամ եկամտային խումբ, որում ընդգրկված են գերազանցապես սպասարկման, հանրակրթության, նախադպրոցական հաստատություններում, մշակույթի, հանգստի և առևտրի ոլորտում զբաղված կանայք.
- 100,000–138,901 ՀՀ դրամ եկամտային խումբ՝ մինչև կանանց միջին ամսական անվանական աշատավարձը, որում ընդգրկված են մեծամասամբ առողջապահության, կրթության, վարչարարական գործունեության և մշակող արդյունաբերության ոլորտում զբաղված կանայք.

[17] Հաշվի առնելով այն հանգամանքը, որ որպես ուսումնասիրության թիրախ դիտարկվում է Երևան քաղաքը՝ գյուղատնտեսության մեջ զբաղվածները չեն դիտարկվել: Երևան քաղաքը, որպես թիրախի ընտրություն, պայմանավորված է, ի տարբերություն մնացած մարզերի՝ բացառությամբ Սյունիքի մարզի, միջին ամսական անվանական աշխատավարձի համեմատաբար բարձր մակարդակով և նախադպրոցական հաստատությունների մեծ քանակով:

[18] 2017թ. տվյալները հրապարակված չեն

[19] «Հայաստանը թվերով-2017», ՀՀ ԱՎԾ, Երևան 2017թ, էջ 32

– կանանց միջին ամսական անվանական աշատավարձից բարձր խումբ՝ պետական կառավարման, ֆինանսական և ապահովագրական գործունեության, տեղեկատվության և կապի ոլորտում զբաղված կանայք:

32. Համաձայն ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության ծառայության ամփոփ տեղեկատվության՝ 2017թ. տարեվերջին երեխայի ծննդյան միանվագ նպաստ ստացել է 38,271 ընտանիք (նշանակված նպաստների քանակը կազմել է 38,598), որից 11,244-ը՝ Երևանում, իսկ 2016թ.-ին՝ համապատասխանաբար 40,887 ընտանիք (նշանակված նպաստների քանակը կազմել է 41,663), որից 12,627-ը՝ Երևանում: Մինչև երկու տարեկան երեխաների թվաքանակը, որոնց համար նշանակվել է նպաստ, 2017թ. տարեվերջին կազմել է 11,669 մարդ, իսկ ստացել է 11,343 մարդ, որից 5,381-ը՝ Երևան քաղաքում (5,231-ը՝ մեկ երեխայի համար, 142-ը՝ 2 երեխայի և 8-ը՝ 3 և ավելի երեխայի համար):[20] Նշանակված ամսական նպաստի չափը կազմում է 18,000 դրամ: Ստորև նեկայացված են 2014-2017թթ. երեխայի միանվագ նպաստ ստացող ընտանիքների և 2016-2017թթ. Երևան քաղաքում մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստ ստացողների նոր նշանակված նպաստների թվաքանակի վիճակագրական տվյալները:

Աղյուսակ 3. Երեխայի միանվագ նպաստ ստացող ընտանիքների քանակ, 2014-2017թթ., միավոր

	2014թ.		**2015թ.**		**2016թ.**		**2017թ.**	
	Ընտանիքների քանակ	Նշանակված նպաստների քանակ	Ընտանիքների քանակ	Նշանակված նպաստների քանակ	Ընտանիքների քանակ	Նշանակված նպաստների քանակ	Ընտանիքների քանակ	Նշանակված նպաստների քանակ
ք. Երևան	11,096	11,224	13,657	13,772	12,627	12,930	11,244	11,365
Ընդամենը ՀՀ	35,697	36,094	44,957	45,261	40,887	41,663	35,8271	38,598

33. Վերջին տարիներին մինչև երկու տարեկան երեխաների համար նշանակված նպաստները և վճարված գումարները նվազել են, ինչը, թերևս, պայմանավորված է նախորդ տասնամյակներին ծնելիության մակարդակի նվազմամբ, որի մասին վկայում են *Աղյուսակ 4-ի* տվյալները: Այսպես, 2014թ. ծնվածների ընդհանուր թիվը կազմել է 43,031 մարդ,[21] իսկ 2017թ.՝ ընդամենը՝ 37,699:[22]

Աղյուսակ 4. Մինչև երկու տարեկան երեխաների թվաքանակը, որոնց համար նշանակվել է նպաստ, 2014-2017թթ.

	2014թ.	**2015թ.**	**2016թ.**	**2017թ.**
Նշանակված նպաստների թվաքանակը, մարդ	12,814	12,611	12,374	11,669
Տարվա ընթացքում վճարված գումարը, մլն. դրամ	3,071.8	2,267.0	2,227.3	2,100.4

34. Ինչպես երևում է *Աղյուսակ 5-ի* և *Աղյուսակ 6-ի* տվյլաներից, 2017թ. մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստ ստացողների թվաքանակն աճել է 2016թ. համեմատ, մինչդեռ ՀՀ-ում նոր նշանակված նպաստների ընդհանուր թվաքանակը նվազել է: Երևանում պատկերն այլ է՝ նոր նշանակված նպաստների թվաքանակն աճել է:

Աղյուսակ 5. Մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստառուները, 2016-2017թթ., մարդ

	Նպաստառուների թվաքանակը, 2016թ.				Նպաստառուների թվաքանակը, 2017թ.			
		այդ թվում				այդ թվում		
	ընդամենը	1 երեխայի համար	2 երեխայի համար	3 և ավելի երեխայի համար	ընդամենը	1 երեխայի համար	2 երեխայի համար	3 և ավելի երեխայի համար
ք. Երևան	4,536	4,430	94	12	5,381	5,231	142	8
Ընդամենը ՀՀ	11,992	11,646	310	36	11,343	11,031	299	13

[20] «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2018թ. հունվար», ՀՀ ԱՎԾ, Երևան 2018թ, էջ 112
[21] «Հայաստանը թվերով-2017», ՀՀ ԱՎԾ, Երևան 2017թ, էջ 22,
[22] «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2017թ. հունվար-դեկտեմբերի», ՀՀ ԱՎԾ, Երևան 2018թ, էջ 139:

Աղյուսակ 6. Մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նոր նշանակված նպաստները, 2016-2017թթ., մարդ

	Նոր նշանակված նպաստառուների թվաքանակը, 2016թ.				Նպաստառուների թվաքանակը, 2017թ.			
	ընդամենը	այդ թվում			ընդամենը	այդ թվում		
		1 երեխայի համար	2 երեխայի համար	3 և ավելի երեխայի համար		1 երեխայի համար	2 երեխայի համար	3 և ավելի երեխայի համար
ք. Երևան	3,286	3,214	66	6	3,680	3,605	70	5
Ընդամենը ՀՀ	8,541	8,302	218	21	7,606	7,447	150	9

35. Մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվող անձանց՝ մինչև երեխայի երկու տարին լրանալը աշխատանքի վերադառնալու աջակցության նպատակով մշակվել և 2017թ-ին ներկայացվել է «Զբաղվածության մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ անելու նախագիծ, որով նախատեսվում է երեխայի խնամքն աշխատանքին զուգահեռ կազմակերպելու համար աջակցության իրավունք՝ ՀՀ կառավարության սահմանված կարգով:

36. Գործող նախադպրոցական հաստատությունների թիվը Հայաստանում վերջին յոթ տարիների ընթացքում շարունակաբար աճել է: Այսպես, եթե 2011թ. գործում էր թվով 660 հաստատություն, ապա 2017թ.՝ արդեն 733 նախադպրոցական կրթություն ապահովող հաստատություն, որոնցից 666-ը՝ մանկապարտեզ, 67-ը՝ մսուր-մանկապարտեզ (գործել է նա 135 դպրոց-մանկապարտեզ): ՆԴՀ-ների ընդհանուր քանակից 692-ը համայնքային և գերատեսչական ենթակայության են, իսկ 41-ը՝ ոչ պետական: ՆԴՀ-ների ընդհանուր թվաքանակի աճը կազմել է 11.1%:[23] Հաճախող երեխաների թվաքանակը 2011թ. կազմել է 63.5 հազ. երեխա, իսկ 2017թ.՝ շուրջ 72.7 հազ. երեխա, նախորդ յոթ տարիների ընթացքում գրանցված աճը՝ 14.5%: Մեկ խմբում երեխաների միջին թվաքանակը կազմել է 26 երեխա, տեղերի փաստացի զբաղվածությունը՝ 87.2%: Միջին հաշվով մեկ ՆԴՀ հաճախել է 88 երեխա, մեկ մանկավարժին բաժին է ընկել 12 երեխա:[24]

37. ՆԴՀ ծառայությունների նկատմամբ պահանջարկի կայուն աճին զուգընթաց աճել են նաև պետական բյուջեից ֆինանսավորվող միջոցները: *Գծապատկեր 6-ում* ներկայացված է վերոնշյալ վերջին յոթ տարիների ընթացքում նախադպրոցական հաստատություններում խնամվող մեկ երեխայի հաշվով պետական բյուջեից հատկացվող միջոցների դինամիկան: Նախադպրոցական հաստատություններում երեխաների թվաքանակի համար հաշվարկային են ընդունվել ՀՀ ազգային վիճակագրական ծառայության համապատասխան ցուցանիշները, իսկ պետական ծախսերի համար՝ 2011-2017թթ. ՀՀ պետական բյուջեի 09 «Կրթություն» բաժնի 01 խմբի 01 դասի «Նախադպրոցական կրթություն» ծախսային ցուցանիշները: Համաձայն դրանց՝ պետական բյուջեի մասին օրենքներով նախատեսված ծախսերը, դիտարկված յոթ տարիների ընթացքում պրոգրեսիվ աճել են յուրաքանչյուր տարի: Այսպես, եթե 2011թ. նախադպրոցական կրթության համար նախատեսված պետական միջոցները մեկ երեխայի հաշվով կազմել են շուրջ 1,527.5 դրամ, ապա 2017թ.՝ արդեն 10,271.9 դրամ՝ նշված ժամկետում արձանագրելով ծախսերի ավելի քան վեցնապատիկ աճ: Նշենք նաև, որ այս ծախսերի գերակշիռ մասը բաժին է ընկնում հաստատուն ծախսերին, մասնավորապես՝ կապիտալ ծախսերին, ինչը վկայում է նախադպրոցական կրթություն ապահովող հաստատությունների թվի աճը 73-ով՝ մասնավորները ներառյալ, ինչպես նաև ՆԴՀ հաճախող երեխաների թվաքանակի աճը:

[23]Աղբյուրը՝ ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, 2011-2017թթ. տարեգրքեր:

[24] «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2018թ. հունվար-մարտին», ՀՀ ԱՎԾ, Երևան 2018թ, էջ 198

Գծապատկեր 6. ՆԴՀ ֆինանսավորում պետական բուջեից[25]



38. ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության փորձագիտական խումբն իրականարել է վերլուծություններ նախադպրոցական ուսումնական հաստատություններում սննդի ծախսերի, հաստիքների թվի, սաների թվի և բյուջեների վերաբերյալ: Մասնավորապես, հիմք է ընդունվել տարեկան 50 մլն. դրամ և ավել բյուջեներ ունեցող 184 համայնքներում (բացառությամբ Երևան համայնքը) ՆԴՀ ներկայացված բյուջեների և կատարված ծախսերի հաշվետվությունները: Ընդհանուր առմամբ վերոնշյալ համայնքներում գործում են 508 մանկապարտեզներ, որոնք ունեն շուրջ 8,480 աշխատակից, շուրջ 40,500 սան և 8.9 մլրդ. դրամ ընդհանուր բյուջե: Արդյունքում, ձևավորած ընտրանքի շրջանակներում մեկ երեխայի հաշվով փոփոխուն ծախսերի միջին օրական մեծությունը գնահատվել է 233.21 դրամ՝ 84.56 դրամ ստանդարտ շեղումով, այսինքն՝ փոփոխուն ծախսերի միջին մեծությունն ընդգրկված է [148.65, 317.77] միջակայքում:

39. Հատկանշական է, որ առանձին վերլուծություններ պնդում են, թե սննդի և հաստիքների նորմատիվներում մի շարք փոփոխություններ իրականացնելու արդյունքում նշված համայնքներում կարող են հարթեցվել մանկապարտեզներում սննդի ծախսերի գծով արձանագրված գրեթե տասնապատիկ տարբերությունները և 184 համայնքներ հնարավորություն կունենան խնայելու շուրջ 1 մլրդ. դրամ՝ մանկապարտեզների միավորմամբ մեկ ՀՈԱԿ-ի ներքո, ինչպես նաև որոշների փակման միջոցով:[26]

40. Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ գործում է 160 նախադպրոցական ուսումնական հաստատություն: Մանկապարտեզ հաճախում է շուրջ 30,000 երեխա, այդ թվում՝ շուրջ 3,000-ը մինչև 3 տարեկան: Երևան քաղաքի համայնքային, գերատեսչական և ոչ պետական ՆԴՀ-ների գործունեության 2017թ. ցուցանիշներն առավել մանրամասն ներկայացված են *Աղյուսակ 7-ում* և *Աղյուսակ 8-ում*: Ինչպես ցույց են տալիս բերված տվյալները՝ մինչև 1.5 տարեկան երեխաների տեսակարար կշիռը Երևան քաղաքի համայնքային, գերատեսչական և ոչ պետական ՆԴՀ-ներ հաճախող երեխաների ընդհանուր թվաքանակի մեջ (32,826 երեխա) չնչին է՝ ընդամենը 0,5% (կամ 157 երեխա), իսկ 1.5 - 3 տարեկաններինը՝ 8.5 % (կամ 2,793 երեխա):

[25] Աղբյուրը՝ «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի մասին» 2011-2017թթ. օրենքներ և ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն՝www.armstat.am

[26] Աղբյուրը՝ *«ՀՀ նախադպրոցական ուսումնական հաստատություններում սննդի ծախսերի, հաստիքների թվի, սաների թվի և բյուջե-ների վերլուծություն»*, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն, Փորձագիտական խումբ, 04.10.2017; http://www.mtad.am/files/docs/1626.pdf

Աղյուսակ 7. Երևան քաղաքի համայնքային, գերատեսչական և ոչ պետական ՆԴՀ-ների գործունեության ցուցանիշներ, 2017թ., միավոր

ՆԴՀ-ների քանակը	Ընդամենը			Երեխաների թվաքանակն՝ ըստ ՆԴՀ-ների տեսակի, մարդ			Խմբերի թվաքանակը, միավոր		Տեղերի քանակը
	Մսուր-մանկապարտեզ	Մանկապարտեզ	Դպրոց-մանկապարտեզ	Մսուր-մանկապարտեզ	Մանկապարտեզ	Դպրոց-մանկապարտեզ	Ընդամենը	Մինչև 3 տարեկան	
220	8	195	17	778	31,032	1,016	1,165	113	35,199

2016թ.

ՆԴՀ-ների քանակը, միավոր	Խմբերի թվաքանակը, միավոր		Տեղերի քանակը, միավոր
	Ընդամենը	Որից՝ մինչև 3 տարեկան երեխաներ	
219	1,157	122	35,940

2015թ.

ՆԴՀ-ների քանակը, միավոր	Խմբերի թվաքանակը, միավոր		Տեղերի քանակը, միավոր
	Ընդամենը	Որից՝ մինչև 3 տարեկան երեխաներ	
219	1,152	111	34,112

Աղյուսակ 8. Երևան քաղաքի համայնքային, գերատեսչական և ոչ պետական ՆԴՀ-ներ հաճախող երեխաների թվաքանակն ըստ տարիքի[27], 2017թ., մարդ

Մինչև 1.5 տարեկան	1.5–ից մինչև 3 տարեկան	3 – 5 տարեկան	6 տարեկան	7 տարեկան
157	2,793	20,357	9,505	14

2016թ.

Երեխաների թվաքանակը	Մինչև 1.5 տարեկան	1.5–ից մինչև 3 տարեկան	3 և բարձր
32,587	20	3,451	29,116

2015թ.

Երեխաների թվաքանակը	Մինչև 1.5 տարեկան	1.5–ից մինչև 3 տարեկան	3 և բարձր
32,289	15	3,169	29,10528

[27] «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2018թ. հունվար-մարտին», ՀՀ ԱՎԾ, Երևան 2018թ., էջ 198-199
[28] Հայաստանի Հանրապետության մարզերը և և Երևան քաղաքը թվերով, 2017», ՀՀ ԱՎԾ, Երևան 2017թ, էջ 139-141:

41. Վաղ մանկության շրջանում երեխայի խնամքի և զարգացման ծառայությունների ընդլայնման պետական քաղաքականության բարեփոխումների ծախսերի և իրատեսականության վերլուծության շրջանակներում, ի լրումն ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կազմում գործող մանկախնամ գործունեություն իրականացնող պետական ոչ առևտրային կազմակերպությունների ծախսերի, մանրամասն քննարկվել են Երևան քաղաքում գործող, նախադպրոցական կրթություն և զարգացման ծառայություններ մատուցող կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունները:

42. Իրականացված վերլուծության շրջանակներում, որպես քաղաքականության ներդրման առաջին ալիքի թիրախ ընտրվել է մայրաքաղաք Երևանը՝ հաշվի առնելով մի շարք գործոններ, այդ թվում՝ մինչև երեք տարեկան երեխայի խնամքի և զարգացման ծառայությունների տրամադրման նպատակով մայրաքաղաքում գործող նախադպրոցական հաստատությունների ներկայում առաջարկվող ծառայությունների շրջանակների ընդլայնման գործնական հնարավորությունները:

43. Երևանում առկա են ենթակառուցվածքային առումով համեմատաբար բարվոք վիճակում գտնվող ՆԴՀ-ներ (մանկապարտեզներ) և այլ մանկախնամ հաստատություններ, որոնց ծառայությունների շրջանակների ընդլայնումը, ըստ էության, նվազ ծախսատար է՝ կապիտալ ներդրումների առումով, օրինակ՝ նոր շենք-շինություններ, կից կառույցներ կամ երեխաների խնամքի համար նախատեսված այլ տարածքների կառուցում և կապիտալ վերանորոգում: Նկատենք, որ նման կապիտալ ծախսերի քննարկումը դուրս է սույն վերլուծության շրջանակներից՝ հաշվի առնելով լրացուցիչ փորձագիտական գնահատականների անհրաժեշտությունը և նման սցենարների համար ֆինանսական միջոցների սակավությունը թե՛ համայնքային, թե՛ պետական բյուջեների մակարդակով, թե՛ կորպորատիվ նախաձեռնությունների համատեքստում:

44. Փորձագիտական խմբի գնահատականով, ինչը հաստատվել է հարցազրույցների և այցելությունների միջոցով, նման չափանիշներին կարող են բավարարել նաև ԱՍՀՆ կազմում գործող «Երևանի Մանկան տուն» ՊՈԱԿ-ը, որն իր գործունեությամբ արդեն իսկ ներգրավված է մինչև երեք տարեկան երեխաների խնամքի ծառայություններում, ունի տարիների փորձ և Երևանի թիվ 92 մանկապարտեզը (ՀՈԱԿ): Վերջինս իրականացնում է նաև ներառական կրթություն, և սոցիալական ոլորտում պետություն–մասնավոր հատված արդյունավետ համագործակցության գերազանց օրինակ է, ապացուցելով նման նախաձեռնությունների կենսունակությունն ու նպատակահարմարությունը: Հարկ է նշել, սակայն, որ երկու դեպքում էլ հարցազրույցների ընթացքում բարձրացվել է վերանորոգման աշխատանքների անհրաժեշտության խնդիրը: Որպես այսպես կոչված «պիլոտային»՝ փորձնական տարբերակ՝ հնարավոր է մինչև երեք տարեկան երեխաների խնամքի ծառայություններ առաջարկել նմանօրինակ կառույցների կողմից՝ ապահովելով համապատասխան նախադրյալները, ինչպես հաստիքների ավելացում, տարածքների առանձնացում և ադապտացում, սննդակարգի վերանայում ամենափոքր տարիքային խմբերի համար և այլն:

45. Սույն հետազոտության շրջանակներում ուսումնասիրվել են Երևան քաղաքում գործող համայնքային բոլոր ՆԴՀ-ների ֆինանսական տվյալները, բացառությամբ Ավան համայնքի, որտեղ գործող ՆԴՀ-ների համար իրականացվում է միասնական հաշվառում: Մասնավորապես, ուսումնասիրվել են 2017-2018թթ. ներկայացված նախահաշիվները, դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը և հաստիքացուցակները: Քանակական գնահատականների առումով սույն հետազոտությունը հատկապես կարևորում է ՆԴՀ-ների 2017թ. ֆինանսական տարվա ծախսային փաստացի կատարողականները:

46. Այսպես, բոլոր մանկապարտեզների հաշվով, ներառյալ Ավան համայնքը, ճշգրտված նախահաշիվների հանրագումարային ծախսերը կազմել են 8,263,936.1 հազ. ՀՀ դրամ, ընդ որում, ծախսերի արձանագրված առավելագույն մեծությունը կազմում է 122,171.6, նվազագույնը՝ 19,854.5 հազ. դրամ: Համաձայն ճշգրտված նախահաշիվների՝ Երևանում համայնքային բոլոր ՆԴՀ-ների համար ծախսերի հանրագումարի միջին մեծությունը 51,638.5 հազ. դրամ է, մեդիանը՝ 47,241.3:

47. Նույն ժամանակահատվածում սննդի գծով ծախսերի միջին մեծությունը կազմում է 11,481.6, իսկ տնտեսական ապրանքների ձեռքբերումների գծով՝ 304.6 հազ. դրամ: Սննդի, տնտեսական և հանրագումար ծախսերի վերաբերյալ մանրամասն վիճակագրական ցուցանիշները ներկայացված են Հավելված 1-ի *Աղյուսակ 2-ում*:

48. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայությամբ գործող պետական ոչ առևտրային կազմակերպությունների համապատասխան ծախսերը վերլուծելիս, սույն հետազոտության մեթոդաբանությանը համահունչ՝ դրանք դասակարգվել են որպես փոփոխական և հաստատուն ծախսեր, հետևաբար նույն տրամաբանությունը կիրառելի է համայնքային նախադպրոցական հաստատությունների մասով: Այդուհանդերձ, հաշվի առնելով տվյալների սահմանափակ

հասանելիությունը, հետազոտությունն իրականացվել է ընտրանքի միջոցով: Ընտրանքը ձևավորվել է ըստ համայնքների՝ պատահական ընտրության միջոցով: Ընտրվել է 32 մանկապարտեզ, այդ թվում՝ մսուր-մանկապարտեզներ: Ինչպես ՀՀ ԱՍՀՆ ՊՈԱԿ-ների ծախսերի պարագայում, այս դեպքում էլ որպես փոփոխական են դիտարկվել սննդի և տնտեսական ապրանքների ձեռքբերման ծախսերը, որոնք, ըստ տնտեսագիտական սահմանման, պետք է հաստատուն լինեն միավորի հաշվով, իսկ մնացած ծախսերը դիտարկվում են որպես հաստատուն:

49. Ձևավորած ընտրանքի շրջանակներում փոփոխուն և հաստատուն ծախսերի դինամիկան մեկ երեխայի հաշվով ամփոփված է *Գծապատկեր 7-ում:*

Գծապատկեր 7: Մեկ երեխայի հաշվով փոփոխուն և հաստատուն ծախսեր (հազ. դրամ)[29]



50. Հատկանշական է, որ փոփոխուն ծախսերը հարաբերական կայուն դինամիկա են դրսևորում, ինչը որոշակիորեն ակնկալելի է, քանի որ դրանք սննդի և տնտեսական ծախսերի հանրագումարն են մեկ անձի հաշվով, իսկ համայնքային բյուջեից մեկ երեխայի հաշվով սննդի ծախսը ֆիքսված մեծություն է՝ 22,500 դրամ, ուստի տատանողականությունը պայմանավորված է տարբեր տարիքային խմբերում ընդգրկված տնտեսական ապրանքների սպառմամբ:

51. Տարվա կտրվածքով փոփոխական ծախսերի թվաբանական միջինը 64,736 դրամ է, մեդիանը՝ 65,155: Հաստատուն ծախսերի շեղումներն իրենց միջին արժեքից հիմնականում մասշտաբի և համայնքային ու այլ առանձնահատկությունների արդյունք են: Այդ շեղումները պայմանավորված են նաև ընտրանքում ներառական կրթություն իրականացնող հաստատությունների առկայությամբ, ինչն առնվազն ենթադրում է լրացուցիչ մասնագիտական հաստիքների համար կատարված ծախսեր: Միջին մեծությունը մեկ տարվա կտրվածքով կազմում է 205,508 ՀՀ դրամ, մեդիանը՝ 198,590 դրամ:

52. Քանի որ Հայաստանի Հանրապետությունում աշխատանքի վարձատրության, դրան առնչվող հարկերի, մի շարք այլ պարտադիր վճարների և պարզապես որպես բիզնեսի՝ համընդհանուր ընդունելի գործառնական ժամանակահատված է ամիսը, նպատակահարմար է ստացված ծախսային գնահատականներն արտահայտել հենց այս ժամանակային կտրվածքով: Մասնավորապես, փոփոխուն և հաստատուն ծախսերի՝ մեկ երեխայի հաշվով միջին մեծություններն ամսական կտրվածքով կազմում են համապատասխանաբար 5,395 և 17,126 դրամ: Փոփոխական ծախսերի մասով ստանդարտ շեղումը 725 է, այսինքն՝ այս ծախսերը գերազանցապես գտնվում են [4,670; 6,120] միջակայքում: Հաստատուն ծախսերն ամփոփված են [13,747; 20,505] միջակայքում՝ 3,379 դրամ ստանդարտ քառակուսային շեղումով: Այս տվյալների հիման վրա, մեկ երեխայի հաշվարկով 6-24 ամսական երեխաների վաղ մանկության տարիքի խնամքի ծառայությունների վճարը գնահատվել է նվազագույնը 44,000 ՀՀ դրամի, իսկ առավելագույնը՝ 51,000 ՀՀ դրամի սահմաններում:[30]

[29] Ընտրանք ք. Երևանի համայնքային ՆԴՀ-ներից (թվով 32 ՆԴՀ)
[30] Խմբի կազմը 9 կամ 12 երեխա: Յուրաքանչյուր խմբի համար 1 երեխայի վարձավճարը կկազմի.
9 երեխայի համար. (5395+17126) + (96 000 +80 000 + 80 000)/9 = 51 000
12 երեխայի համար. (5395+17126) + (96 000 +80 000 + 80 000)/12 = 44 000

53. Ծախսերի հաջորդ կարևոր բաղադրիչն աշխատավարձի ուղղակի ծախսերն են: Հիմնվելով 1-3 տարեկան երեխաների վաղ խնամքի ծառայություններ տրամադրող մասնավոր ՆԴՀ-ների ուսումնասիրության արդյունքների վրա՝ հաշվարկների հիմքում խմբի մեծությունը մեր կողմից ընտրվել է 9-12 երեխայի հաշվարկով, իսկ աշխատակիցների քանակը յուրաքանչյուր խմբի համար՝ երեք (դաստիարակ, դաստիարակի օգնական և դայակ-սանիտար): Ինչպես ցույց է տալիս տվյալների վերլուծությունը, ներկայում մասնավոր ոչ պետական, ՆԴՀ-ների կողմից 1-2.5 տարեկան երեխաների խնամքի ծառայության վճարները բավական բարձր են, ինչը դրանք դարձնում է սակավ մատչելի և սահմանափակում նման ծառայություններից օգտվող ընտանիքների թվաքանակը: Այսպես, 1-2.5 տարեկան երեխաների վեցօրյա խնամքի համար «Մեղուներ» մսուր-մանկապարտեզի կողմից ծառայության վճարը կազմում է շուրջ 90,000 ՀՀ դրամ, «Մալու մանկիկ» մանկապարտեզում՝ 80-90,000 ՀՀ դրամ, «Բեմբի» մսուր-մանկապարտեզում 1.5-3 տարեկան երեխաների խնամքի վճարը շուրջ 100,000 ՀՀ դրամ է: Խմբերում երեխաների թիվը 6-ից 12 է սահմաններում, իսկ յուրաքանչյուր խմբում աշխատողների թիվը՝ 2-3 անձ (դաստիարակ, դաստիարակի օգնական, սանիտար-դայակ):

54. Սույն վերլուծության մեջ գնահատված թե՛ նվազագույն, թե՛ առավելագույն վճարներն նշանակալիորեն ցածր են մասնավոր հատվածում ներկայում առաջարկվող համանման ծառայությունների վճարի չափից: Հետևապես, եթե պետական ՆԴՀ-ների կողմից առաջարկվեն վճարովի ծառայություններ համեմատաբար ցածր վճարի դիմաց, ապա զգալիորեն կավելանա դրանցից օգտվող կանանց և ընտանիքների թիվը:

55. Մասնավոր ՆԴՀ ծառայություններից օգտվելու պարագայում կնոջ աշխատավարձը պետք է կազմի նվազագույնը 140,000 ՀՀ դրամ, որպեսզի նման ծառայությունները զուտ ֆինանսապես արդարացված լինեն նրա համար: Մինչդեռ պետական կառույցների կողմից ՆԴՀ ծառայությունների առաջարկի պարագայում դրանցից կարող են օգտվել ավելի ցածր եկամտային խմբի կանայք՝ սկած 90-100,000 դրամից: Սա են վկայում ստորև ներկայացված աղյուսակի հաշվարկները.

Աղյուսակ 9. Աշխատավարձի հնարավոր ընդունելի մակարադակները, ՀՀ դրամ

	Օգուտ	**Ծախս**	**Օգուտ**	**Ծախս**
Անվանական աշխատավարձ (մինչ հարկերը վճարելը)	100,000		138,901	
Աշխատավարձ (հարկերը վճարելուց հետո)	71,000		99,000	
Մինչև երկու տարեկան երեխայի նպաստ		18,000		18,000
ԵԽԶԾ վճար - առավելագույն սցենար		51,000		51,000
Զուտ օգուտ/ծախս	2,000		30,000	
ԵԽԶԾ վճար – նվազագույն սցենար		44,000		44,000
Զուտ օգուտ/ծախս	9,000		37,000	

56. Ինչպես վկայում են *Աղյուսակ 9*-ի տվյալները, ամսական անվանական աշխատավարձի նվազագույն շեմը, որը կարող է ապահովել ամբողջական ծախսածածկում, 100,000 ՀՀ դրամ է՝ թեև նվազագույն վճարի տարբերակում այդ ցուցնիշը կարող է կազմել 90,000 ՀՀ դրամ: Առավել շոշափելի օգուտ կարող են ակնկալել այն մայրերը, ում աշխատավարձը հավասար է կամ գերազանցում է կանանց միջին ամսական անվանական աշխատավարձը, որը կազմում է շուրջ 139,000 ՀՀ դրամ:

57. Մինչև երկու տարեկան երեխայի խնամքի և զարգացման ծառայություններից օգտվելու դեպքում մոր/ընտանիքի և պետության համար օգուտների և ծախսերի/կորստի տեսանկյունից հնարավոր ազդեցությունը սույն հետազոտության մեջ գնահատելու նպատակով հիմնվել ենք աշխատավարձի վերոնշյալ երկու մակարդակների վրա, որոնցից առաջինը ծախսածակման նվազագույն շեմն է: Այդուհանդերձ, հարկ է նկատի ունենալ, որ զուտ ծախսածակումն ամենևին էլ չի ենթադրում, թե ընտանիքն անպայմանորեն կօգտվի առաջարկվող ծառայություններից, և երեխա խնամող մայրը կվերադառնա աշխատանքի: Սա անվանական աշխատավարձի այն նվազագույն մակարդակն է, որից բարձր աշխատանքային եկամուտ ունենալու պարագայում կմեծանա խնամող մոր՝ աշխատանքի վերադառնալու հավանականությունը:

58. Երեխայի խնամքի և զարգացման ծառայությունների ազդեցությունը գնահատելու նպատակով իրականացված ծախսեր-օգուտներ վերլուծության շրջանակներում դիտարկվել է երեխայի հետծննդյան 24 ամսյա ժամանակահատվածը, որի ընթացքում պետության կողմից վճարվում է երեխայի խնամքի նպաստ՝ ամսական 18,000 ՀՀ դրամի չափով: Ստացված արդյունքները համեմատելի դարձնելու նպատակով դրանք զեղչվել և բերվել են ժամանակային տեսակետից միասնական մեկնարկային կետի: Որպես այդպիսին սույն հետազոտության շրջանակներում ընդունվել է երեխայի ծննդյան և նպաստի նշանակման պահը: Հաշվարկների համար որպես զեղչադրույք սույն հետազոտության շրջանակներում կիրառվել է ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանվող բանկային տոկոսի հաշվարկային դրույքը, որը կազմում է տարեկան 12%:[31]

59. Երեխայի խնամքի և զարգացման ծառայությունների (ԵԽԶԾ) սահմանափակ հասանելիության և դրանից չօգտվելու պարագայում, մոր կամ ընտանիքի կողմից ստացված օգուտը կազմում է 24 ամսվա ընթացքում ստացված երեխայի խնամքի նպաստի հանրագումարը, որը միաժամանակ ծախս է պետության համար, քանի որ այդ միջոցները վճարվում են պետական բյուջեից: Վերը նշված ծառայություններից չօգտվելու դեպքում ընտանիքի և պետության համար զուտ օգուտի և ծախսերի հաշվարկը ներկայացված է ստորև բերված *Աղյուսակ 10-ում*:

Աղյուսակ 10. Ծնողների և պետության համար, ԵԽԶԾ-ի չօգտվելու դեպքում, զուտ օգուտի և ծախսերի հաշվարկ,

	Օգուտ	Ծախս/կորուստ
Մոր/ընտանիքի կողմից 24 ամիս - մինչև երկու տարեկան երեխայի նպաստի ստացված գումարը՝ ամսական 18 000 ՀՀ դրամ	432,000	
Պետության կողմից 24 ամիս - մինչև երկու տարեկան երեխայի նպաստի վճարված գումարը՝ ամսական 18 000 ՀՀ դրամ		432,000
Զուտ օգուտ-ծախս, դիսկոնտավորված արժեք	**382,381.0**	**382,381.0**

60. Աշխատող մայրերի և նրանց ընտանիքների ու պետության համար 6-24 ամսական երեխաների խնամքի և զարգացման ծառայությունների հասանելիության ապահովման և դրանցից օգտվելու պարագայում օգուտներն ու ծախսերն նշանակալի փոփոխություն են կրում: Մոր կամ ընտանիքի համար 24 ամսվա կտրվածքով որպես օգուտ հարկ է դիտարկել երեխայի՝ ներառյալ 6 ամիսը լրանալը վճարվող նպաստի գումարը, իսկ հետագա 18 ամիսների համար՝ ստացված աշխատավարձը: Աշխատանքի վերադառնալու դեպքում 18 ամիսների ընթացքում չստացված նպաստի գումարը և ԵԽԶԾ-ների համար վճարվող միջոցները ծնողի/ընտանիքի համար համապատասխանաբար կորուստ են (չվաստակած հնարավոր եկամուտ) և ծախս: Միաժամանակ, պետության համար 18 ամիսների ընթացքում երեխայի նպաստի վճարումների դադարեցումը օգուտ է՝ պետական բյուջեի վճարումների խնայողության տեսքով: Բացի այդ, պետությունը օգուտներ է ստանում մոր՝ աշխատանքի վերադառնալու դեպքում նրա աշխատավարձից պահվող հարկերի և այլ վճարների տեսքով, ինչպես նաև լրացուցիչ օգուտներ՝ երեխայի խնամքի ծառայությունների ֆորմալացման արդյունքում նոր աշխատատեղերի բացման և դրանցից գանձվող հարկային մուտքերի տեսքով:

61. Ստորև բերված աղյուսակներում ներկայացված է մինչև երկու տարեկան երեխայի խնամքի և զարգացման ծառայություններից օգտվելու դեպքում մոր/ընտանիքի համար օգուտների և ծախսի/կորստի տեսանկյունից հնարավոր ազդեցությունը:

[31] ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածի համաձայն ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանվող բանկային տոկոսի հաշվարկային դրույք, որը կիրառվում է ուրիշի դրամական միջոցներն ապօրինի պահելու, դրանք վերադարձնելուց խուսափելու, վճարման այլ կետանցով դրանք օգտագործելու, կամ այլ անձի հաշվին անհիմն ստանալու կամ խնայելու դեպքերում այդ գումարին վճարվող տոկոսների չափը որոշելու համար, ինչպես նաև՝ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում:

Աղյուսակ 11. Ծախսեր–օգուտ վերլուծություն, 1 երեխայի հաշվարկով

Ծնողի համար, ԵԽՁԾ-ի օգտվելու դեպքում, առավելագույն վարձավճարի սցենար				
	100,000 ՀՀ դրամ ամսական անվանական աշխատավարձ		138,901 ՀՀ դրամ ամսական անվանական աշխատավարձ *(կանանց միջին աշխատավարձ)*	
	օգուտ	ծախս/կորուստ	օգուտ	ծախս/կորուստ
18 ամիս աշխատավարձից ստացված եկամուտ	1,096,801.7		1,529,343.2	
6 ամիս մինչև երկու տարեկան երեխայի նպաստի ստացված գումար	104,318.6		104,318.6	
18 ամիս մինչև երկու տարեկան երեխայի նպաստի չստացված գումար		278,062.4		278,062.4
18 ամիս, ամսական 51,000 ՀՀ դրամ ԵԽՁԾ համար վճարված գումար		787,843.5		787,843.5
Ընդամենը	1,201,120.3	1,065,905.9	1,633,661.8	1,065,905.9
Զուտ օգուտ-ծախս/կորուստ, դիսկոնտավորված արժեք	**135,214.4**		**567,755.9**	
Ծախսեր-օգուտներ գործակից	**1.13**		**1.53**	

Ծնողի համար, ԵԽՁԾ-ից օգտվելու դեպքում, նվազագույն վարձավճարի սցենար				
	100,000 ՀՀ դրամ ամսական անվանական աշխատավարձ		138,901 ՀՀ դրամ ամսականն անվանական աշխատավարձ *(կանանց միջին աշխատավարձ)*	
	օգուտ	ծախս/կորուստ	օգուտ	ծախս/կորուստ
18 ամիս աշխատավարձից ստացված եկամուտ	1,096,801.7		1,529,343.2	
6 ամիս մինչև երկու տարեկան երեխայի նպաստի ստացված գումար	104,318.6		104,318.6	
18 ամիս մինչև երկու տարեկան երեխայի նպաստի չստացված գումար		278,062.4		278,062.4
18 ամիս, ամսական 43,000 ՀՀ դրամ ԵԽՁԾ համար վճարված գումար		679,708.1		679,708.1
Ընդամենը	1,201,120.3	957,770.5	1,633,661.8	957,770.5
Զուտ օգուտ-ծախս/կորուստ, դիսկոնտավորված արժեք	**243,349,8**		**675,891.3**	
Ծախսեր-օգուտներ գործակից	**1.25**		**1.71**	

62. Ինչպես վկայում են *Աղյուսակ 11-ում* ներկայացված տվյալները, թե՛ նվազագույն, և թե՛ առավելագույն վարձավճարի սցենարների դեպքում, 24 ամսվա կտրվածքով զուտ օգուտի-ծախսերի դիսկոնտավորված արժեքները դրական են ծնողի/ընտանիքի համար: Սակայն, ինչպես արդեն նշվել է, այդ դրական ցուցանիշն ավելի մեծ է միջին աշխատավարձի շրջանակներում վարձատրության դեպքում: Հաշվարկները փաստում են, որ միջին աշխատավարձի դեպքում 24 ամսվա համար ընտանիքի/մոր դիսկոնտավորված զուտ եկամուտը նվազագույն վարձավճարի դեպքում կկազմի 675.9 հազար դրամ, իսկ առավելագույն վարձավճարի դեպքում՝ 567.8 հազար դրամ, ամսական կտրվածքով համապատասխանաբար շուրջ 28.1 և 23.7 հազար դրամ:

63. Եկամտի աճի կամ ծախսերի նվազման գրավական կարող է դառնալ գործատուների մասնակցությունը ծառայությունների կազմակերպման ծրագրին՝ վաղ տարիքում երեխայի խնամքի ծառայությունների վարձավճարի համաֆինանսավորման տեսքով: Մասնավորապես, կորպորատիվ սոցիալական պատասխանատվության շրջանակներում նրանց կողմից կարող է մասնակիորեն փոխհատուցվել ԵԽՁԾ-ների վարձավճարը: Գործատուի շահագրգռվածությունն իր մասնակցությունն ունենալու և

համաֆինանսավորելու ԵԽԶԾ-ների դիմաց վճարվող ծախսերը կարող է դրսևորվել աշխատողի՝ երեխայի խնամքի արձակուրդից արագ վերադարձի և որպես մարդկային կապիտալում իրականացված ներդրումների արդյունավետ և ի շահ բիզնեսի օգտագործմամբ՝ հաշվի առնելով նոր կադրեր ընդունելու և պատրաստելու ծախսերն ու ժամանակատարությունը:

64. Մեկ երեխայի հաշվով ծնողի կամ ընտանիքի համար ծախսեր-օգուտներ գործակիցը դրական է. և կախված վարձավճարից ու եկամտի մակարդակից, նվազագույնը կազմում է 1.13՝ առավելագույն վարձավճարի և ծախսածածկումն ապահովող նվազագույն եկամտի դեպքում, և 1.71՝ նվազագույն վարձավճարի և կանանց միջին աշխատավարձի դեպքում: Այսինքն, 1 դրամ ծախսը ոչ միայն փոխհատուցվում է, այլև նվազագույնն ապահովում է 0.13 դրամ հավելյալ զուտ օգուտ: Պետության կամ գործատուի կողմից մասնակի փոխհատուցման միջոցով վարձավճարի նվազեցման պարագայում, այս գործակիցն ընտանիքի համար կմեծանա: Ավելին, որքան բարձր է մոր աշխատավարձի մակարդակը, այնքան նրա կամ ընտանիքի համար ավելի են մեծանում երեխայի վաղ տարիքում խնամքի ծառայություններին ուղղված ծախսերի արդյունավետության մակարդակը և օգուտները:

65. Ստորև բերված աղյուսակներում ներկայացված է մինչև երկու տարեկան երեխայի խնամքի և զարգացման ծառայություններից օգտվելու դեպքում պետության համար օգուտների և ծախսի/կորստի տեսանկյունից հնարավոր ազդեցությունը: Հարկ է հաշվի առնել, որ եթե հաշվարկներում ներառվեն կապիտալ ծախսեր՝ պետության կողմից, ծախսեր-օգուտներ գործակիցը կարող էր ունենալ բացասական մեծություն դիտարկվող ժամանակահատվածում:

Աղյուսակ 12. Պետութան համար, ծնողների կողմից ԵԽԶԾ-ից օգտվելու և աշխատանքի վերադառնալու դեպքում

	100,000 ՀՀ դրամ ամսական անվանական աշխատավարձ		138,901 ՀՀ դրամ ամսականն անվանական աշխատավարձ *(կանանց միջին աշխատավարձ)*	
	օգուտ	ծախս/կորուստ	օգուտ	ծախս/կորուստ
18 ամիս աշխատավարձից եկամտային հարկի գանձում, դիսկոնտավորված արժեք	355,301.9	-	493,514.4	
18 ամիս սոցիալական վճարից ստացված մուտքեր (պարտադիր կուտակային կենսաթոշակ), դիսկոնտավորված արժեք	77,239.6		107,285.7	
18 ամիս դրոշմանիշային վճարների գանձում, դիսկոնտավորված արժեք	15,447.9		15,447.9	
18 ամիս, մինչև երկու տարեկան երեխայի նպաստի վճարումների դադարեցման արդյունքում խնայողություններ, դիսկոնտավորված արժեք	278,062.4		278,062. 4	
6 ամիս, մինչև երկու տարեկան երեխայի նպաստի վճարում, դիսկոնտավորված արժեք		104,318.6		104,318.6
24 ամիս, ընդամենը՝	**726,051.8**	**104,318.6**	**894,310.5**	**104,318.6**
Զուտ օգուտ-ծախս/կորուստ, դիսկոնտավորված արժեք	**621,733.2**		**789,991.8**	
Ծախսեր-օգուտներ գործակից	**6.96**		**8.57**	

66. Վաղ տարիքում երեխաների խնամքի ծառայություններից օգտվելու դեպքում պետության տեսանկյունից մակրո մակարդակով 24 ամսվա համար օգուտը ձևավորվում է մոր՝ աշխատանքի վերադառնալու դեպքում 7-րդ ամսից սկսած մինչև երկու տարեկան երեխայի նպաստի վճարումների դադարեցման արդյունքում խնայողությունների և աշխատավարձից պահվող հարկերի ու այլ պարտադիր վճարների հաշվին: 18 ամիսների կտրվածքով մինչև երկու տարեկան երեխայի նպաստի վճարումների դադարեցման արդյունքում խնայողությունների դիսկոնտավորված արժեքը կազմել է 278.1 հազար ՀՀ դրամ, իսկ աշխատավարձից ստացված հարկային և այլ մուտքերի դիսկոնտավորված արժեքը, կախված մեր կողմից դիտարկված աշխատավարձի նվազագույն ընդունելի և միջին մակարդակներից, համապատասխանաբար կազմել է 447.9 հազար և 616.2 հազար ՀՀ դրամ: 24 ամսվա կտրվածքով պետության ծախսերը կազմում են ընդամենը 104.3 հազար դրամ՝ 6 ամսվա ընթացքում վճարվող

նպաստների դիսկոնտավորված արժեք: Արդյունքում մեկ երեխայի հաշվարկով պետության զուտ օգուտը կկազմի համապատասխանաբար շուրջ 621.7 և 790.0 հազար դրամ:

67. Հիմնվելով 2017թ. իրականացված «Սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների տարածվածությունն ու պատճառները Հայաստանում» զեկույցի արդյունքների վրա, որում հարցված կանանց 29.5%-ը աշխատելու պատրաստակամություն է հայտնել երեխայի 6 ամիսը լրանալուց հետո,[32] կանանց զբաղվածության, եկամուտների, մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստ ստացողների վերաբերյալ առկա տեղեկատվության և ներկայացված հաշվարկների վրա՝ կարելի է ասել, որ Երևան քաղաքում երեխայի վաղ խնամքի ծառայություններից օգտվողների հնարավոր թիվը կարող է կազմել շուրջ 660,[33] որը կապահովի պետության համար առնվազն 410.3 մլն դրամ եկամուտ՝ նպաստի խնայված գումարների և ստացված հարկային ու այլ մուտքերի հաշվին:

68. Պետության համար ծախսեր-օգուտներ գործակիցը բավական բարձր է, և մոր աշխատավարձի/եկամտի մակարդակից կախված՝ նվազագույնը 6.96 է՝ 100,000 դրամ աշխատավարձի դեպքում, որը ծախսածածկումն ապահովող նվազագույն եկամտի շեմն է, իսկ միջին աշխատավարձի պարագայում այդ ցուցանիշը կազմում է 8.57: Միաժամանակ, հարկ է նշել, որ նշված գործակցի հաշվարկը վերաբերում է այն դեպքին, երբ գործատուն հետծննդյան և երեխայի խնամքի արձակուրդում գտնվող ծնողի հաստիքը թափուր է թողնում և ժամանակավորապես նոր աշխատակից չի վարձում:

69. Ի լրումն վերը նշված օգուտների, պետությունը կարող է ակնկալել հավելյալ սոցիալական և ֆինանսական օգուտ՝ երեխաների խնամքի ծառայությունների ֆորմալացման արդյունքում նոր աշխատատեղերի և դրանցից վճարվող հարկային ու այլ մուտքերի տեսքով: Հաշվարկները ներկայացված են ստորև բերված *Աղյուսակ 13-ում*:

Աղյուսակ 13. Հավելյալ օգուտ պետության համար՝ ՆԴՀ-ներում նոր աշխատատեղերի տեսանկյունից յուրաքանչյուր խմբի համար (9-12 երեխա մեկ խմբում)

Հաստիք, 18 ամսվա համար, դիսկոնտավորված արժեք	Ամսական դրույքաչափ	Եկամտային հարկ	Սոցիալական վճար	Դրոշմանիշային վճար	Ընդամենը
Դաստիարակ	96,000	341,089.9	74,150.0	15,4447.9	430,687.8
Դաստիարակի օգնական	80,000	282,241.6	61,791.6	15,4447.9	361,481.1
Սանիտար-դայակ	80,000	282,241.6	61,791.6	15,4447.9	361,481.1
Ընդամենը		**909,573.0**	**197,733.3**	**46,343.7**	**1,153,650.0**

70. Վաղ մանկության շրջանի խնամքի ծառայությունների վճարի չափը հաշվարկելիս մեկ խմբում ընդգրկվող երեխաների թվաքանակն ընդունվել է նվազագույնը 9, առավելագույնը՝ 12 երեխա, իսկ յուրաքանչյուր խմբում երեխաների խնամքով զբաղված աշխատակիցների թվաքանակը՝ 3: Դա թույլ է տվել ծախսեր-օգուտներ հաշվարկն իրականացնել երկու սցենարի համար՝ նվազագույն և առավելագույն վարձավճարի: Յուրաքանչյուր խմբի համար վաղ տարիքի երեխայի խնամքի ծառայությունների ֆորմալացման պարագայում հավելյալ աշխատատեղերից բացի, 18 ամսվա կտրվածքով պետության համար հնարավոր է ապահովել հավելյալ օգուտ՝ շուրջ 1,153,650 ՀՀ դրամի չափով:

71. Հաշվի առնելով, որ իրականացված հաշվարկների շրջանակներում շահառու երեխաների թվաքանակը կարող է կազմել շուրջ 660, ապա կարելի է ասել, որ պետությունը, կախված խմբում երեխաների թվաքանակից՝ 9 կամ 12 երեխա, կարող է ստանալ հավելյալ եկամուտ՝ առավելագույնը 84,601,000, նվազագույնը՝ 63,450,750 ՀՀ դրամի չափով, ինչպես նաև հավելյալ 213 և 165 նոր աշխատատեղ:

72. Մեկ երեխայի հաշվով պետության հավելյալ օգուտը, 9 երեխայից կազմված խմբի դեպքում, ամսական կկազմի 7,121.3 դրամ, իսկ 12 երեխայից կազմված խմբի դեպքում՝ 5,341.0 դրամ: Բայց, միևնույն ժամանակ, երեխաների թվաքանակի աճը կարող է հանգեցնել վարձավճարների նվազման, ծառայությունների առավել մատչելիության և շահառու մայրերի օգուտների ընդլայնման: Հետևաբար նաև, ծառայությունից օգտվող կամ պոտենցիալ շահառուների թիվը կաճի:

73. Քանի որ սույն հետազոտության շրջանակներում ծախսերի ուսումնասիրությունն իրականացվել է երկու առանցքային ուղղություններով՝ ԱՍՀՆ համակարգում պետական բյուջեից և համայնքային բյուջեներից

[32] «Սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների տարածվածությունն ու պատճառները Հայաստանում» զեկույց, Երևան 2017թ., էջ 14

[33] 5,381 (նպաստառուների թվաքանակ) * 29.9% * 41.5 % (աշխատավարձի ընդունելի հնարավոր մակարդակ)

ֆինանսավորվող մանկախնամ հաստատություններ, պետական քաղաքականության բարեփոխումների հնարավոր հետևանքները կարելի է ներկայացնել ավելի լայն՝ ողջ տնտեսության, ինչպես նաև համակարգի առանձին շահառուների վրա ազդեցության տեսանկյունից: Նկարագրվող իրավիճակային փոփոխություններում առանցքային է ժամանակային հեռանկարը, ուստի կդիտարկենք երեք ժամանակային ինտերվալ՝ *կարճաժամետ* (քաղաքականության փոփոխություններն անմիջապես ազդեցություն են ունենում դիտարկվող ցուցանիշների վրա), *միջնաժամկետ* (փոփոխությունների արդյունքներն ուժի մեջ են մտնում ժամանակային որոշակի հեռանկարում՝ սովորաբար 5-7 տարի) և *երկարաժամկետ* (փոփոխությունների վերջնական ազդեցությունը մակրոտնտեսական ցուցանիշներում դրսևորվում է մինչև 20-30 տարի ժամանակային հեռանկարում):

74. Սոցիալական քաղաքականության ցանկացած փոփոխության ազդեցություն որոշակիորեն պայմանավորված է շահառուների վարքագծով, նրանց անձնական օգուտներով և շարժառիթներով: Մանկախնամ ծառայությունների պահանջարկը կաճի, միաժամանակ կընդլայնվեն երեխաների ոչ ֆորմալ խնամքի ծառայությունները, այդ թվում՝ տատիկների և պապիկների կամ ընտանքի չաշխատող այլ անդամի կողմից խնամքի տրամադրումը, ինչպես նաև դայակի ծառայություններից օգտվելու պրակտիկան: Կարճաժամեկտ հատվածում վաղ մանկության շրջանի խնամքի ծառայությունների պահանջարկի աճը պայմանավորող գլխավոր գործոնը ընտանիքի եկամուտն է: Այս ծառայություններում փոփոխությունների նպատակահարմարությունը պայմանավորված է, թե որքանով դրանց պահանջարկն ու առաջարկը կարձագանքեն պետական և համայնքային բյուջեներից ֆինանսավորման և քաղաքականության այլ դրույթների փոփոխությանը, ինչն արդյունքում ազդեցություն կունենա ընտանեկան բյուջեի, խնամքի ծառայությունների որակի և հասանելիության վրա:

- Ընտանիքների կողմից ծառայությունների նկատմամբ պահանջարկի փոփոխությունը կախված է ծնողների եկամուտների մակարդակից, երեխայի մոր՝ աշխատանքի վերադառնալու կամ նոր աշխատանք գտնելու հնարավորությունից, ինչպես նաև սուբյեկտիվ ընկալումներից, թե որքանով է արժեքավոր ու նպատակահարմար խնամքի ծառայություններից օգտվելը:
- Առաջարկը կարձագանքի պահանջարկում տեղի ունեցած փոփոխություններին, ինչի արդյունքում կընդարձակվի կամ կկրճատվի ներկա ծառայությունների ցանկը:
- Հանրային ծառայություններ մատուցողների կողմից դրանց գնի և քանակի վերաբերյալ որոշումները և ընտանիքների արձագանքը հավասարակշռելու համար ժամանակ կպահանջվի, սակայն, ի վերջո, շուկայական մեխանիզմների ազդեցությամբ գերիշխող կդառնա ընտանիքների կողմից առավել նախընտրելի գին-որակ հարաբերակցությունը, հակառակ պարագայում նույն տրամաբանությամբ կընդլայնվի մասնավոր հատվածը:
- Միջնաժամկետ արդյունքների մասով քաղաքականության փոփոխության առավել նշանակալի ազդեցությունը կրում են ՆԴՀ կրթություն ստացող երեխաների ընդգրկվածության և ծնողների՝ աշխատուժում ընդգրկվածության ցուցանիշները:
- Աշխատուժին մասնակցությունը՝ խնամող ծնողի կողմից աշխատանքի վերադառնալը և աշխատաժամերն ուղղակիորեն պայմանավորված են վաղ մանկության շրջանում երեխային համապատասխան խնամքի հանձնելու հնարավորությունից և օրվա ընթացքում այդ ծառայությունների տևողությունից և տրամադրման ժամերից:
- Երեխայի խնամքի և զարգացման առումով կարևորվում են թե՛ վերոնշյալ պայմանները, թե՛ խնամողների մասնագիտական պատրաստվածությունը և ծառայությունների ընդհանուր որակը:
- Աշխատուժի ընդլայնված առաջարկն անմիջական և ուղղակի ազդեցություն ունի ողջ տնտեսության մասշտաբով համախառն թողարկման ծավալների՝ ՀՆԱ-ի վրա:
- Տնտեսական աճի արդյունքում ընդլայնվում են կազմակերպությունների և տնային տնտեսությունների եկամուտները՝ հանգեցնելով պետական եկամուտների աճի կորպորատիվ և անհատական հարկերի տեսքով:

75. Երկարաժամկետ հատվածում նկարագրված սցենարային զարգացման համատեքստում թվարկված փոփոխություններն ի վերջո ներդրում են մարդկային կապիտալում, ինչը նախադրյալներ է ստեղծում տնտեսական կայուն աճի և զարգացման, ինչպես նաև աղքատության մակարդակի կրճատման և հասարակության բարեկեցության ընդլայնման համար:

76. Վաղ տարիքում երեխայի խնամքի և զարգացման ծառայությունների ներդրման և այդ ոլորտում սոցիալական քաղաքականության փոփոխության վերոնշյալ հնարավոր ազդեցությունները ընդհանրացված և ամփոփ ներկայացված են *Գծապատկեր 8-ում*:

Գծապատկեր 8. Վաղ տարիքում երեխաների խնամքի ծառայությունների քաղաքականության հնարավոր փոփոխության ազդեցության ծախսեր-օգուտներ գնահատման սխեմատիկ կառուցվածքը.



Եզրակացություններ

77. Երեխայի վաղ մանկության շրջանի խնամքի և զարգացման ծառայությունների ոլորտում վարվող պետական քաղաքականության ուսումնասիրությունը ծախսային տեսանկյունից սույն հետազոտության շրջանակներում պայմանականորեն իրականացվել է երկու առանցքային ուղղություններով: Նախ. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կազմում գործող երեխաների ինչպես շուրջօրյա, այնպես էլ ցերեկային խնամքի ու հոգածության ծառայություններ ապահովող պետական ոչ առևտրային կազմակերպությունների ծառայությունների ընդլայնման ուղղությամբ: Երկրորդ. որպես համայնքային ոչ առևտրային կազամակերպություններ գործող և համայնքային բյուջեներից ֆինանսավորվող՝ երեխայի նախադպրոցական կրթության և զարգացման ծառայություններ տրամադրող հաստատությունների ծառայությունների ընդլայնման ուղղությամբ: Թեպետ վերոնշյալ հաստատություններում խնամյալների տարիքային կազմն ավելի ընդգրկուն է միչև երեք տարեկան խմբի համեմատ, այդուհանդերձ, դրանք որոշ առանձնահատկություններով գնահատման հիմք են:

78. Ծախսերի ուսումնասիրության հիմքում դրանց դասակարգումն է ըստ տնտեսագիտական կատեգորիաների՝ փոփոխական և հաստատուն, և ընդհանուր ծախսերը՝ որպես երկուսի հանրագումար: ՀՀ ԱՍՀՆ պետական ոչ առևտրային կազմակերպությունների փոփոխուն ծախսերի ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել. 2010թ. սկսած պետական սուբսիդավորման պայմանագրերի համաձայն՝ փոփոխուն ծախսերի միջին մեծությունը կազմում է շուրջ 1,365 դրամ՝ 302.85 դրամ ստանդարտ շեղումով: ՀՀ կառավարության 2007թ. մայիսի 31-ի N 815-Ն որոշմամբ հաստատվել են մանկատանը, երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատությունում (անկախ դրա կազմակերպա-իրավական ձևից), ինչպես նաև հատուկ հանրակրթական ուսումնական հաստատությունում սովորող երեխայի խնամքի և սպասարկման նվազագույն չափորոշիչները, որոնք անփոփոխ են առ այսօր: Եթե, օրինակ, երեխայի խնամք իրականացնող հաստատության համար խնամյալի հագուստի, կոշկեղենի և փափուկ գույքի տեսականին ու քանակը կարելի է դիտարկել որպես հարաբերականորեն կայուն ցուցանիշ, ապա նույն սկզբունքը ծախսային տեսանկյունից կիրառելի չէ սննդակարգի վերաբերյալ՝ առնվազն հաշվի առնելով ինֆլյացիոն ճնշումները:

79. Վերոնշյալ 815-Ն որոշմամբ որպես հաստատուն դասակարգված ծախսերի դինամիկան սկսած 2010թ. ցուցադրել է հետևյալ հիմնական միտումները. դիտարկված բոլոր մանկախնամ հաստատությունների համար հաստատուն ծախսերի մասով արձանագրված միջին մեծությունը տարեկան կտրվածքով կազմում է 125,845 հազ. դրամ: Մեկ խնամյալի հաշվով հաստատուն ծախսերի միջին մեծությունը 1,183 դրամ է:

80. Կրթության ոլորտում իրականացվող շարունակական ծրագրային բարեփոխումների, ինչպես նաև կապիտալ ծրագրերի ծախսային գնահատականի առումով հատկանշական է, որ պետական բյուջեից կրթության ոլորտին, մասնավորապես՝ նախադպրոցական կրթությանը հատկացվող միջոցները տարեցտարի ավելացել են, և, եթե ընդունենք նաև նախադպրոցական հաստատություններ երեխաների հաճախելիության միջին ցուցանիշի աճը՝ 13-14%, ապա նախադպրոցական տարիքի մեկ երեխայի հաշվարկով ծախսերն աճել են շուրջ 1,530-ից մինչև 10,270 դրամ տարեկան կտրվածով, ինչը բավական բարձր ցուցանիշ է:

81. Ընդամենը ծախսերը՝ որպես փոփոխական և հաստատուն ծախսերի հանրագումար պարզագույն տարբերակով կարելի է ներկայացնել հետևյալ կերպ՝

ընդամենը ծախսեր = (փոփոխուն ծախսեր x խնամյալների թվաքանակ) x օրերի քանակ + հաստատուն ծախսեր:

82. Ներկայացած մոտեցումը չի արտահայտում տվյալ ոլորտում բարեփոխումների նպատակահարմարությունը կամ անհրաժեշտությունը, ինչը կատարված է ՄԶՄԿ վերը նշված մի շարք հետազոտություններում, այլ ընդհանրացնում է առկա սահմանափակ ռեսուրսների պարագայում մանկախնամ հաստատությունների պահպանման ընդհանուր պատկերը: Ակնհայտ է ողջ հանրապետության մասշտաբով պետական հոգածության ներքո գործող մանկախնամ հաստատություններում կապիտալ ներդրումների անհրաժեշտությունը, ինչն առնվազն վերաբերում է շենք-շինությունների վերանորոգման աշխատանքներին, որի մասին վկայում են նաև մեր կողմից իրականացված հարցազրույցները:

83. Կապիտալ ներդրումների առկայության դեպքում վաղ մանկության շրջանի խնամքի և զարգացման ծառայությունների ընդլայնման արդյունքները դիտարկվել են ժամանակային երեք միջակայքերում՝ կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ: Կարճաժամկետ սցենարի դեպքում կընդլայնվի խնամքի ծառայությունների հանդեպ պահանջարկն ընտանիքների կողմից: Սրա մասին են վկայում,

օրինակ, հանրապետության տարածքում միայն ոչ մասնավոր մանկապարտեզների թվի աճը յոթ տարների ընթացքում 11.1%-ով: Աճող պահանջարկին զուգընթաց նախադրյալներ կձևավորվեն ծառայությունների առաջարկն ընդլայնելու համար և, եթե սա չիրականանա հանրային հատվածում, ապա մասնավոր հատվածի նորաստեղծ կամ ընդլայնված հաստատությունները կփոխարինեն դրանց, սակայն անհամեմատ դանդաղ և շերտավորված: Պահանջարկը խթանող առանցքային գործոնը ընտանիքի եկամուտն է, մասնավորապես, երեխային խնամքի հանձնող ծնողի վերադարձն աշխատանքի միևնույն կամ սակավ ծանրաբեռնվածությամբ (լրիվ կամ ոչ լրիվ դրույքով), սակայն պայմանով, որ խնամքի ծառայությունները նվազ ծախսատար են, քան աշխատանքային եկամուտները: Վերջին հանգամանքը կարելի է համարել գերխնդիր հանրապետության մասշտաբով, և ՆԴՀ ծառայությունների ընդլայնման տրամաբանությունը պետք է միտված լինի հենց այս խնդրի լուծմանը: Առաջարկի տեսանկյունից ծառայությունների գնի և որակի վերաբերյալ որոշումները որոշ ժամանակ կպահանջեն, սակայն ի վերջո կհաստատվի ընտանիքների կողմից առավել նախընտրելի տարբերակների հավասարակշռություն:

84. Միջնաժամկետ հատվածում արդյունքները ներկայանում են սցենարային զարգացումներով. աշխատանքի վերադարձող ծնողներն իրենց հերթին ընդլայնում են աշխատուժի առաջարկը, ինչը, տնտեսագիտական տեսության համաձայն, ուղղակի և անմիջական ազդեցություն ունի թողարկման համախառն ծավալների՝ ՀՆԱ-ի վրա: Ասվածը հաստատվում է սոցիոլոգիական հարցումների արդյունքներով՝ մինչև երեք տարեկան երեխա խնամող մայրերի 83%-ը, որոնք կարող են նշանակալիորեն ընդլայնել աշխատուժը ողջ տնտեսության մակարդակով, չեն վերադառնում աշխատանքի՝ պատճառաբանելով երեխայի խնամքի այլընտրանքային տարբերակների բացակայությունը: Տնտեսական աճի հետևանքով ձևավորվում են եկամուտի լրացուցիչ աղբյուրներ, ինչպես գործատու կազմակերպությունների, այնպես էլ տնային տնտեսությունների համար աշխատող մայրերի շնորհիվ, և արդյունքում կարձանագրվի նաև պետական եկամուտների աճ՝ կորպորատիվ և անհատական հարկերի տեսքով:

85. Երկարաժամկետ հատվածում ստացվելիք արդյունքները հանդիսանում են նախորդ երկու՝ կարճաժամկետ և միջնաժամկետ սցենարային զարգացումների տրամաբանական շարունակությունը, ինչը կարտահայտվի այնպիսի մակրոտնտեսական ցուցանիշների բարելավմամբ, ինչպես աղքատության մակարդակի կրճատումը և ընդհանուր հասարակական բարեկեցության աճը, տնտեսական կայուն աճն ու զարգացումը:

86. Մինչև երկու տարեկան երեխաների խնամքի կազմակերպումը ՆԴՀ-ներում և մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվող անձի աշխատանքի վերադառնալու ապահովումը կարող է էական ազդեցություն ունենալ ինչպես անհատական (երեխայի ու մոր համար) ու միկրո, այնպես էլ մակրո մակարդակում և սոցիալական կամ հանրային ընկալումների դաշտում:

87. **Անհատական մակարդակ՝ ազդեցություն երեխայի վրա**: 6-36 ամսական երեխաների համար ապահովում է վաղ մանկության տարիքի երեխաների ոչ ծնողական խնամքի բարձրորակ ծառայություններ՝ համապատասխան հաստատությունների մասնագետների կողմից բարձրորակ լիցենզավորված ծառայությունների տրամադրման միջոցով: Սա կարող է պահանջել լրացուցիչ ռեսուրսներ, որոնք անհրաժեշտ են երեխայի բարձրակարգ որակի խնամք ապահովելու համար:

88. Անբավարար եկամտի, երեխայի խնամքի համապատասխան ծառայությունների բացակայության կամ դրանց մասին ոչ լիարժեք տեղեկատվության պատճառով շատ ծնողներ չեն օգտվում վաղ հասակում երեխաների խնամքի ծառայություններից:

89. **Անհատական մակարդակ՝ ազդեցություն ծնողի վրա**: Երեխայի վաղ խնամքի ծառայությունների հասանելիությունը և դրանից օգտվելու հնարավորությունը խրախուսում է մայրերին՝ պահպանելով աշխատանքային գործունեությունը, շարունակելու լրիվ դրույքով աշխատելու և աշխատանքում առաջխաղացման հնարավորությունները: Երեխայի խնամքով պայմանավորված աշխատանքային դադարի տևողության կրճատումը և վերադարձը նախկին աշխատանքին կամ նոր աշխատանքի անցնելը դրականորեն է ազդում նրանց մարդկային կապիտալի վրա:

90. Մայրերի համար հնարավորություն է ստեղծվում և խրախուսվում է աշխատանքի վերաբերյալ որոշումների կայացումը ժամանակային հեռանկարային հորիզոնում, ինչը նրանց թույլ է տալիս ապահովել ֆինանսական անկախություն, ավելի լայն մասնակցություն ընտանիքում և հասարակական կյանքում որոշումների կայացմանը:

91. Միկրո մակարդակում ազդեցությունը շոշափելի է թե՛ տնային տնտեսությանն համար՝ ընտանեկան բյուջե եկամուտի ավելացման տեսքով, թե՛ գործատուների համար՝ աշխատակիցների՝ իրենց աշխատանքի վերադառնալու և տնտեսական գործընթացներին մասնակցելու տեսանկյունից: Գործատուների համար շատ դեպքերում ոչ միայն ժամանակատար, այլև ծախսատար է հետծննդյան և երեխայի խնամքի արձակուրդում գտնվելու դեպքում համապատասխան մասնագետի համաչափ փոխարինումը նոր աշխատողով՝ պայմանավորված մասնագիտական և աշխատանքային առանձնահատկություններով: Աշխատողի երկարաժամկետ արձակուրդում գտնվելու հանգամանքը կարող է հանգեցնել աշխատանքի անցնելու հնարավորության և աշխատանքային գործունեության արդյունավետության նվազման՝ պայմանավորված ժամանակի ընթացքում մասնագիտական որակի անկմամբ:

92. Մակրո մակարդակում նույնպես հնարավոր է ապահովել զգալի դրական ազդեցություն՝ մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվող անձի՝ աշխատանքի վերադառնալու պարագայում: Մասնավորապես, պետական բյուջեի ծախսերի նվազեցում՝ մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստի գումարի չվճարման խնայողությունների, աշխատանքի վերադառնալու դեպքում հարկերից ստացվող մուտքերի ապահովման ու տնտեսական գործունեության խթանման հաշվին:

93. **Հանրային կամ սոցիալական մակարդակում ազդեցություն**: Փոփոխում է երիտասարդ աղջիկների կարծիքը/տեսլականը ապագա աշխատանքային հնարավորությունների և հեռանկարների մասին: Խթանում է գենդերային հավասարությունը հասարակության մեջ: Կրթության և մարդկային կապիտալի զարգացման որոշումները շատ դեպքերում կայացվում են հիմնվելով ընտանիքի՝ մայրերի առկա փորձից: Երեխաների վաղ տարիքի խնամքի ծառայությունների հասանելիությունը և մատչելիությունը թույլ է տալիս երիտասարդ աղջիկներին կատարել երկարաժամկետ ներդրումներ մարդկային կապիտալում՝ հիմնվելով ունակությունների, այլ ոչ թե սեռային առանձնահատկությունների վերաբերյալ առկա կարծրատիպերի ու դրանցով պայմանավորված սահմանափակումների վրա: Հավասար պայմանների ապահովումն իր հերթին հանգեցնում է հանրային գիտակցության փոփոխության՝ տղային հավասար՝ աղջիկ երեխայի արժևորման, և հնարավորություն ընձեռելով վերացնել ընտանիքի վերարտադրողական որոշումներում սեռի հիմքով խտրականությունը:

94. Երեխայի վաղ տարիքի խնամքի ծառայությունների ազդեցության գնահատումն իրականացվել է ծախսեր-օգուտներ մեթոդով՝ հիմվելով Երևան քաղաքի ՆԴՀ-ների ֆինանսական հաշվետվությունների վերլուծության վրա: Մեկ երեխայի հաշվարկով 6-36 ամսեկան երեխաների վաղ տարիքի խնամքի ծառայությունների վճարը կազմել է նվազագույնը 44,000, իսկ առավելագույնը՝ 51,000 ՀՀ դրամի սահմաններում:

95. Ծախսերի հաշվարկման ժամանակ կապիտալ ծախսերը չեն դիտարկվել և չեն հաշվառվել ծախսերի մեջ:

96. Հաշվարկներն իրականացվել են երկու եկամտային խմբերի համար՝ 100,000 ՀՀ դրամ ամսական անվանական աշխատավարձի, ինչը նաև ծախսածածկման շեմն է, և 139,000 ՀՀ դրամ, որը համարժեք է Հայաստանում կանանց միջին ամսական անվանական աշխատավարձին:

97. Տնտեսական դրական ազդեցությունը շոշափելի է հատկապես միջին և բարձր եկամտային խմբերի կանանց համար, քանի որ թույլ է տալիս վճարել երեխայի խնամքի ծառայությունների դիմաց, ինչպես նաև զգալիորեն ավելացնել ընտանեկան բյուջեի եկամուտները: Այսպես, եթե հաշվի առնենք, որ մինչև երկու տարեկան երեխայի խնամքի համար ծառայությունների առավելագույն վճարն ըստ հաշվարկների կազմել է շուրջ 51,000 ՀՀ դրամ, ապա կանանց միջին անվանական աշխատավարձի պարագայում ընտանեկան բյուջեի մուտքերը ամսական կավելանան շուրջ 50,000 դրամով, ինչը կարող է նշանակալիորեն ընդլայնել կնոջ՝ աշխատանքի վերադառնալու ընտրության հնարավորությունը:

98. Ողջ տնտեսության մասշտաբով կանանց համար հաշվարկված անվանական միջին աշխատավարձի դեպքում 24 ամսվա համար ընտանիքի/մոր եկամտի զուտ դիսկոնտավորված արժեքը նվազագույն վարձավճարի դեպքում կազմել է 675.9 հազար դրամ, իսկ առավելագույն վարձավճարի դեպքում՝ 567.8 հազար դրամ՝ ամսական կտրվածքով համապատասխանաբար շուրջ 28.1 և 23.7 հազ. դրամ:

99. Մեկ երեխայի հաշվով ծնողի կամ ընտանիքի համար ծախսերի արդյունավետությունը գնահատող ծախսեր-օգուտներ գործակիցը նվազագույնը կազմում է 1.13՝ առավելագույն վարձավճարի և ծախսածածկումն ապահովող նվազագույն եկամտի դեպքում, և 1.71՝ նվազագույն վարձավճարի և կանանց միջին աշխատավարձի դեպքում: Այսինքն, կատարված յուրաքանչյուր 1 դրամ ծախսը նկարագրված սցենարների պարագայում կարող է ողջ տնտեսության մասշտաբով ոչ միայն

վերականգնվել, այլև ստեղծել հավելյալ օգուտ 0.13 դրամի չափով, իսկ առավելագույնը՝ 0.71 դրամ: Հետևաբար, ավելի բարձր եկամուտը կապահովի արդյունավետության ավելի բարձր գործակից:

100. Մեկ երեխայի հաշվարկով 24 ամսվա կտրվածքով պետության զուտ օգուտը, աշխատավարձի դիտարկված սցենարների պարագայում, կազմում է համապատասխանաբար շուրջ 621.7 և 790.0 հազար դրամ, իսկ ծախսեր-օգուտներ գործակիցը՝ 6.96 և 8.57: Սույն հետազոտության շրջանակներում քննարկված Երևան քաղաքի ՆԴՀ-ների ծառայությունների ընդլայնման արդյունքում առաջին փուլում շուրջ 660 երեխայի վաղ մանկության խնամքի ծառայությունների տրամադրման արդյունքում ՀՀ պետական բյուջեի եկամուտները կավելանան 410-ից 521 միլիոն ՀՀ դրամով:

101. Երեխաների վաղ տարիքի խնամքի ծառայությունների ֆորմալացման արդյունքում նոր աշխատատեղերի և դրանցից վճարվող հարկային ու այլ մուտքերի տեսքով պետությունը 18 ամսվա կտրվածքով հավելյալ կստանա եկամուտ առավելագույնը 84,601,000, նվազագույնը՝ 63,450,750 ՀՀ դրամի չափով, ինչպես նաև հավելյալ 213 և 165 նոր աշխատատեղ:

102. Երեխայի վաղ տարիքի խնամքի քաղաքականության մեջ փոփոխություններն ազդում են ինչպես երեխայի զարգացման, այնպես էլ աշխատուժում կանանց մասնակցության վրա:

103. Երեխայի վաղ տարիքի խնամքի ծառայությունների առկայությունը կարող է լուծել հետևյալ խնդիրները.

- Նշված տարիքի երեխաներ ունեցող և աշխատող կանայք ընտանիքի անդամների կամ դայակի կողմից երեխայի խնամքի ծառայություններին այլընտրանք կունենան՝ ինստիտուցիոնալ խնամքի տեսքով:
- Հաճախ հարկային դաշտից դուրս վճարվող ծառայություններին որպես այլընտրանք կծառայեն որակյալ ծառայություններ մատուցող վճարովի և հարկատու մսուր-մանկապարտեզները:
- Կանայք, ովքեր ցանկանում են, սակայն չեն աշխատում երեխայի խնամքի որակյալ ծառայությունների հասանելիության և մատչելիության սահմանափակ լինելու պատճառով, հնարավորություն կստանան աշխատելու կամ տնօրինելու իրենց ժամանակը՝ ի նպաստ իրենց եկամուտների և մասնագիտական կարողությունների զարգացման:

104. Աշխատուժում կանանց մասնակցության մակարդակի բարձրացումը կնպաստի.

- ընտանիքների ֆինանսական կայունության, եկամուտների և բարեկեցության բարձրացմանը,
- կանանց արժևորմանն ու նրանց ինքնագնահատականի բարձրացմանը, ինչը կարևոր է նաև երեխաների դաստիարակության՝ հատկապես աղջիկ երեխաների սոցիալականացման առումով և որպես օրինակելի կերպար հանդիսանալու գործում,
- գենդերային կարծրատիպերի փոխակերպմանը, կանանց և տղամարդկանց՝ տնտեսության և հասարակության կյանքի տարբեր ոլորտներում համատեղ և ներդաշնակ մասնակցության միջոցով առողջ հասարակության կայացմանը:

105. Վերը նշված քաղաքականության իրականացումը մեծապես կնպաստի հասարակության մեջ և ընտանիքում կանանց և տղամարդկանց վերարտադրողական և արտադրողական դերերի հավասարակշռմանը, ինպես նաև աշխատելու և վերարտադրողական նպատակներն իրականացնելու և դրանք համատեղելու՝ կանանց, ներկայում մեծապես սահմանափակ հնարավորությունների ընդլայնմանը, որոշումների կայացման «կա՛մ-կա՛մ» տարբերակը՝ «և՛-և՛» տարբերակով փոխարինելուն:

106. Աշխատուժում կանանց մասնակցության աճը, աշխատանքն ու երեխայի խնամքը համադրելու հնարավորությունների նկատելի ավելացումը կկանխեն ծնելիության մակարդակի հետագա անցանկալի կրճատումը և կնպաստեն աղջիկ երեխայի արժևորմանը՝ կարևորագույն նախադրյալներ ձևավորելով երեխայի սեռի խտրական ընտրության երևույթն անշրջելիորեն արմատախիլ անելու համար:

107. Երեխայի վաղ տարիքի խնամքի ծառայությունների ֆինանսավորման համար չկա մեկ լավագույն մոդել, մեթոդ կամ մեխանիզմ: Դրանց ընտրության նպատակահարմարությունը պայմանավորված է երկրի սոցիալական և տնտեսական քաղաքականության նպատակներից, պետության և ընտանիքի միջև փոխհարաբերությունների հայեցակարգից, ինչպես նաև երեխայի վաղ խնամքի և զարգացման տարբեր քաղաքականությունների իրատեսականության գնատականներից: Հայաստանում հարկավոր է խրախուսել վաղ մանկության տարիքի խնամքի ծառայությունների տարբեր մոդելների ներդրումը: Այսպես, մայրաքաղաքում երեխայի վաղ մանկության տարիքի խնամքի ծառայությունների բնույթը կարող է տարբերվել փոքր բնակավայրերում առաջարկվող ծառայությունների մոդելներից: Միաժամանակ, բոլոր առաջարկվող մոդելներին միավորում է մեկ չափորոշիչ՝ առանձին թիրախ խմբերին որակյալ ծառայությունները հասանելի ու մատչելի դարձնելու հնարավորությունը:

Առաջարկություններ

108. Սույն հետազոտության արդյունքների և եզրակացությունների հիման վրա կարելի է անել քաղաքականության մի շարք առաջարկություններ:

109. Առաջին. անհրաժեշտ է *կարճաժամկետ* հատվածում անհապաղ նախաձեռնել և իրականացնել վաղ մանկության խնամքի ծառայությունների ներդրման ծրագիր՝ Երևան քաղաքի ՆԴՀ-ների ծառայությունների ընդլայնման միջոցով: Ծրագրի իրականացման միայն առաջին երկու տարիների ընթացքում շուրջ 660 երեխայի վաղ մանկության խնամքի ծառայությունների կազմակերպման արդյունքում ՀՀ պետական բյուջեի եկամուտները տարեկան միջինում կավելանան շուրջ 250-ից 300 միլիոն ՀՀ դրամով: Անհրաժեշտ է նաև իրականացնել վերը նշված ծրագրի ընթացիկ մշտադիտարկում, ինչպես նաև ամփոփիչ գնահատում՝ դրա ավարտից հետո:

110. Երկրորդ. *միջնաժամկետ* հատվածում անհրաժեշտ է մշակել և ներդնել վաղ մանկության տարիքի երեխայի խնամքի ծառայությունների ընդլայնման և մանկախնամ կենտրոնների գործունեության ֆինանսական երաշխիքներ և ֆինանսավորման մեխանիզմներ, այդ թվում՝

- վաղ մանկության տարիքի երեխայի խնամքի ծառայությունների գործատուների կողմից համաֆինանսավորման մեխանիզմ աշխատող մայրերի համար՝ կորպորատիվ սոցիալական պատասխանատվության և հանրային-մասնավոր գործընկերության շրջանակներում.
- ցածր եկամտային խմբերին պատկանող կանանց համար վաղ մանկության տարիքի երեխայի խնամքի ծառայությունների համաֆինանսավորման մեխանիզմների նախատեսում՝ պետական բյուջեի միջոցներով.
- վաղ մանկության տարիքի երեխայի խնամքի ծառայությունների սուբսիդավորում ցածր եկամուտ ունեցող և/կամ երիտասարդ ընտանիքների համար.
- վաղ մանկության տարիքի երեխայի խնամքի ծառայությունների դիմաց կատարված ծախսերին համարժեք հարկային պարտավորությունների նվազեցում աշխատող մայրերի համար.
- վաղ մանկության տարիքի երեխայի խնամքի ծառայությունների նպաստի սահմանում աշխատող մայրերի համար՝ որպես սոցիալական աջակցության բաղադրիչ.
- դրամաշնորհների տրամադրում վաղ մանկության տարիքի երեխայի խնամքի ծառայություններ մատուցող հաստատություններին՝ պետական և/կամ համայնքային բյուջեների միջոցների հաշվին:

111. Երրորդ. առաջարկվում է *երկարաժամկետ* հատվածում Երևան քաղաքի ՆԴՀ-ների ծառայությունների ընդլայնման միջոցով մինչև երեք տարեկան երեխաների խնամքի ծառայությունների առաջարկի ծածկույթը (հասանելիությունը) մինչև 2025 թվականը հասցնել 10%-ի, իսկ մինչև 2030 թվականը վաղ մանկության շրջանի խնամքի ծառայություններում մինչև երեք տարեկան երեխաների ընդգրկվածությունը հասցնել 15%-ի: Այս առումով կարևորվում է, մասնավորապես, վաղ մանկության տարիքի երեխայի խնամքի ծառայությունների, դրանց հնարավոր օգուտների և մեխանիզմների վերաբերյալ իրազեկվածությունը թիրախ խմբերի և շահառուների շրջանում, այդ թվում՝ սոցիալական գովազդի, թիրախ խմբերի և շահառուների իրազեկման քարոզարշավում տեղական հասարակական կազմակերպություններին, խոշոր գործատուներին և սոցիալական աշխատողների ներգրավման, շահագրգիռ կողմերի հետ հանրային քննարկումներ կազմակերպելու միջոցով:

Հավելված 1. ՀՀ ԱՍՀՆ մի շարք ՊՈԱԿ-ների փոփոխուն և հաստատուն ծախսերի ընդհանուր նկարագրություն

Աղյուսակ 1: Փոփոխուն և հաստատուն ծախսերի ընդհանուր նկարագրություն (ԱՍՀՆ ՊՈԱԿ-ներ)

	Փոփոխուն ծախսեր (դրամ)	*Հաստատուն ծախսեր (հազ. դրամ)*
Թվաբանական միջին	1,365.73 դր.	1,183.12 դր.
Ստանդարտ սխալ	32.47 դր.	61.80 դր.
Մեդիան	1,300.00 դր.	993.69 դր.
Մոդ	1,335.00 դր.	1,055.70 դր.
Ստանդարտ քառակուսային շեղում	302.85 դր.	576.43 դր.
Kurtosis – վերցրվածության գործակից	2.70	2.17
Skewness – ասիմետրիայի գործակից	1.91	1.50
Տիրույթ	1,231.45 դր.	2,553.61 դր.
Նվազագույն արժեք	979.20 դր.	532.41 դր.
Առավելագույն արժեք	2,210.65 դր.	3,086.02 դր.
Գումար	118,818.50 դր.	102,931.34 դր.
Դիտարկումների թիվ	87	87

Աղյուսակ 2: Փոփոխուն և հաստատուն ծախսերի ընդհանուր նկարագրություն (Երևան քաղաքի ՀՈԱԿ-ներ)

	Սննդի ծախսեր	*Տնտեսական ծախսեր*	*Նախահաշվի ընդամենը ծախս*
Թվաբանական միջին	11481.6	304.6	51638.5
Ստանդարտ սխալ	457.1	20.9	1669.3
Մեդիան	10223.9	250	47241.3
Մոդ	#N/A	0	#N/A
Ստանդարտ քառակուսային շեղում	5654.0	259.0	20648.5
Kurtosis – վերցրվածության գործակից	0.63	0.01	0.44
Skewness – ասիմետրիայի գործակից	0.99	0.86	0.87
Տիրույթ	26815.7	999.3	102317.1
Նվազագույն արժեք	3103.9	0	19854.5
Առավելագույն արժեք	29919.6	999.3	122171.6
Գումար	1756681.9	46607.2	7900690
Դիտարկումների թիվ	153	153	153

Հավելված 2.
Երևանի «Մանկան տուն» պետական ոչ առևտրային կազմակերպություն

1. Կազմակերպությունը հիմնադրվել է դեռևս ԽՍՀՄ տարիներին՝ 1937թ., և առ այսօր հանդիսանում է պետական միջոցներով ֆինանսավորվող, առևտրային նպատակներ չհետապնդող կազմակերպություն: ԽՍՀՄ փլուզումից մինչ 1998թ. գործել է Հայաստանի հանրապետության առողջապահության նախարարության վերահսկողության և հովանու, այնուհետև՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության: Համաձայն կառավարության 2002թ. հոկտեմբերի 31-ի N 1730-Ն որոշման՝ նախկին Երևանի «Մանկան տուն» պետական հիմնարկը վերակազմավորվել է որպես Երևանի «Մանկան տուն» պետական ոչ առևտրային կազմակերպություն:

2. Մանկատանը խնամվող մինչև 6 տարեկան երեխաների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը, սոցիալ-հոգեբանական բժշկական վերականգնման աշխատանքների իրականացումը, սննդով, հագուստով և այլ կենցաղային անհարժեշտ իրերով ապահովումը, խնամքի և դաստիարակության ապահովումը, ուսուցման և բժշկական օգնության կազմակերպումը, նրանց՝ խնամքի այլ հաստատություն տեղափոխումն է: Խորհրդային ժամանակաշրջանում իրականացվել է մինչև 3 տարեկան երեխաների խնամք, դաստիարակություն և բուժում, իսկ հետխորհրդային շրջանում արդեն մինչև 6 տարեկան: Պետական կազմակերպությունն առաջնային հաշվետվողական է ԱՍՀՆ-ին:

3. Ոչ առևտրային կազմակերպության տնօրենն ունի շուրջ 17 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ, ղեկավարում է Երևանի «Մանկան տունը»: Այսպես, տնօրենի, վերջին 3 տասնամյակների ընթացքում նկատվում է խնամյալների թվաքանակի նվազման միտում, որը պայմանավորված չէ պետական ֆինանսավորման կրճատմամբ: Եթե 1981թ. մանկատանը խնամվող երեխաների թիվը կազմել է 110, ապա 2017թ.՝ 71: 2000-2017թթ. մանկատանը խնամվող երեխաների միջին թվաքանակը նվազել է շուրջ 22 % 1980-2000թթ. ցուցանիշի նկատմամբ՝ 90-ից մինչև 70: Երևանի «Մանկան տանը» բնորոշ է նաև խնամյալների շարժի բարձր ցուցանիշ. մոտ 20 %-ը վերադառնում է կենսաբանական ընտանիք, 20-30 %-ը որդեգրվում են, եթե առանց ծնողական խնամքի մնացած երեխայի մոտ առկա են ծանր սահմանափակ կարողություններ, նրան տեղափոխում են խնամքի մասնագիտացված հաստատություն, ինչպիսիք են Գյումրու «Երեխաների տուն» և «Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ-ները, մնացած մասը կազմում են նկարագրված խմբերում չներառված երեխաները, ում խնամքն իրականացնում են այլ հաստատություններում՝ 6 տարեկանը լրանալուց մինչև չափահաս դառնալը:

4. Այսպիսով, խնամյալների միջին թվաքանակի ցուցանիշը հարաբերականորեն կայուն է վերջին ժամանակաշրջանում՝ միջինը 70 երեխա, որը հաշվի առնելով կատարվում է ծախսերի պլանավորում և բաշխում: Պետական կազմակերպության գործունեությանն առնչվող անորոշության գերակշիռ մասը ծախսային տեսանկյունից հանդիսանում է եղանակային փոփոխություններով պայմանավորված կոմունալ վճարումների փոփոխականությունը:

(հազ. դրամ)

Անվանում	**Տարի**		
	2014	**2015**	**2016**
Բյուջետային միջոցներից իրականացված էներգետիկ և այլ կոմունալ ծախսեր	14,443.70	15,046.00	14,266.70
այլ (բարեգործական) միջոցներով իրակացված	208.50	51.70	181.20
% բյուջետային ծախսերի նկատմամբ	*1.44%*	*0.34%*	*1.27%*
Բյուջետային միջոցներից իրականացված կապի ծառայության ծախսեր	259.10	259.10	259.10
այլ (բարեգործական) միջոցներով իրականացված	403.70	479.30	514.20
% բյուջետային ծախսերի նկատմամբ	*155.81%*	*184.99%*	*198.46%*

5. Հատկանշական է բյուջետային պլանավորման ընթացքում ծախսային հոդվածների հարաբերական կայունությունը, շատ դեպքերում, ինչպես օրինակ կապի ծառայությունների պարագայում, անփոփոխ մնալը, թեպետ ՊՈԱԿ-ի փաստացի ծախսերն այս ուղղությամբ նշանակալի գերազանցում են պետական ֆինանսավորմամբ ստացված միջոցներին և վճարվում բարեգործական նպատակներով հավաքագրված

գումարներից: Այս ցուցանիշը պայմանավորված է գործունեության առանձնահատկություններով, բարեգործ անհատների և կազմակերպությունների հետ մշտական կապը, ինչպես նաև մատակարարման շղթան անխախտ պահելու անհրաժեշտությամբ:

6. Ղեկավարության գնահատականը կազմակերպության գործունեության արդյունավետության վերաբերյալ բարձր է՝ հաշվի առնելով խնամվողների թվաքանակի դինամիկան և շարժի բարձր ցուցանիշը:

7. Համաձայն ղեկավարության՝ յուրաքանչյուր 2 աշխատակցի խնամակալության ներքո է գտնվում 15 երեխա, ինչը վկայում է ծանրաբեռնվածության բարձր աստիճանը: Հաստիքային աշխատակիցների տարեկան միջին թիվը 110 է, որոնք մեծամասամբ ներգրավված են ոչ ադմինիստրատիվ բնույթի աշխատանքներում: Նշված խնդիրների շարքում, բացի խնամողների աշխատավարձերի ցածր մակարդակը և ծանրաբեռնվածության բարձր աստիճանը, կարելի է առանձնացնել նաև երեխայի խնամքի և սպասարկման նվազագույն չափորոշիչները վերանայելու անհրաժեշտությունը: Մանկատանը, երեխաների պաշտպանության և խնամքի գիշերօթիկ հաստատությունում (անկախ դրա կազմակերպական-իրավական ձևից) խնամվող, ինչպես նաև հատուկ հանրակրթական ուսումնական հաստատությունում սովորող երեխայի խնամքի և սպասարկման ներկայիս նվազագույն չափորոշիչները հաստատվել են կառավարության 2007թ. մայիսի 31-ի N 815-Ն որոշմամբ և անփոփոխ են առ այսօր: Եթե, օրինակ, երեխայի խնամք իրականացնող հաստատության համար խնամյալի հագուստի, կոշկեղենի և փափուկ գույքի տեսականին ու քանակը կարելի է դիտարկել որպես հարաբերականորեն կայուն ցուցանիշ, ապա նույն սկզբունքը ծախսային տեսանկյունից կիրառելի չէ սննդակարգի տեսանկյունից՝ առնվազն հաշվի առնելով ինֆլյացիոն ճնշումները:

8. Գնումների գործընթացը կարգավորվում է ՀՀ պետական բյուջեի «Երեխայի շուրջօրյա խնամքի ծառայություններ» ծրագրի շրջանակներում յուրաքանչյուր բյուջետային տարի կնքվող սուբսիդիայի տրամադրման պայմանագրի դրույթներին համապատասխան:

9. «Երևանի մանկան տուն» ՊՈԱԿ կողմից մինչ յուրաքանչյուր տարվա առաջին կիսամյակի ավարտը հաշվարկվում, գնահատվում և ներկայացվում են հաջորդ հաշվետու տարվա համար անհրաժեշտ ծախսերը՝ որպես հիմք ընդունելով նախորդ տարիների համապատասխան ցուցանիշները և կատարելով անհրաժեշտ ճշգրտումներ, կրկին որպես հաշվարկային հիմք ընդունելով կառավարության N 815-Ն որոշումը: Բյուջետավորման գործընթացը, ինչպես նաև գնումները և առօրյա մատակարարումների վերահսկողությունն իրականացվում է կազմակերպության հաշվապահական բաժնի կողմից:

10. Ոչ առևտրային կազմակերպության կողմից ներկայացված հաշվետվությունների համաձայն, ինչպես նաև ղեկավարության հավաստմամբ պետական բյուջեի միջոցների գերածախս երբևէ չի արձանագրվել: Հակառակը, 2014-2017թթ. պետական բյուջե վերադարձված գումարը կազմում է շուրջ 9,035 հազ. դրամ (2014թ. 286 հազ., 2015թ. 783 հազ. և 2016թ. 7,966 հազ. դրամ):

11. Կազմակերպությունում հաշվապահական հաշվառումը վարվում է, իսկ ընդհանուր նշանակության ֆինանսական հաշվետվությունները ներկայացվում են համաձայն Հայաստանի հանրապետության հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտի (ՀՀՀՀՍ): Վերջին մի քանի տարիների ընթացքում իրականացվել է հիմնական միջոցների վերագնահատում, որի արդյունքներով 25 հազ. դրամից ցածր հաշվեկշռային արժեք ունեցող հիմնական միջոցները ճանաչվել են որպես արագամաշ առարկաներ: